

ԴՐՈՇՆԻԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ԱԿԵՐՈՒՄ ԵՆ, ԿՈՏՈՐՈՒՄ ԵՆ

1-ն Սեպտեմբերի 1895 թ.

Ահա՛ թէ ինչ է ներկայացնում Տաճկահայաստանը, ահա՛ թէ ինչ է անցնում ամեն ժամանակ, ամեն օր այդ երկրում։ Նա՛ Տաճկահայաստանը ամբողջովին մատնած է աւազակ-ներին ու մարդասպաններին—աւերում, կոտորում են...

Լէշակեր սուլթանի կառավարութիւնը վճռել է, այդ վաղճը ենք ասել, ամբողջ երկիրը—Տաճկահայաստանը աւերակ դարձնել, ամայացնել, եւ ահա հենց Սասունի կոտորածի տարեդարձին, հենց նոյն ամսում, նա մի նոր կոտորած է անում Երզնկայի շրջակայքում, պաշարման տակ դնելով ամբողջ գաւառը եւ քաղաքը։ Եւ կոտորածի հերոսը դարձեալ Զէքի փաշան է, նա է հրաման արձակողը՝ լէշակերի կարգադրութեան համեմատ։

Ի՛նչ ճակատագրական զուգահիշութիւն—նոր սարսափը տեղի է ունենում նոյն ամսում, նոյն հերոսի ձեռքով եւ դեռ նա ու նրա ընկերները ապրում են, դեռ հայ յեղափոխականի սուրբ կամ գնդակը չէ պատժել նրան եւ նրա ընկերներին...

Աւերո՛ւմ, կոտորո՛ւմ են, իսկ դիպումատիան շարունակում է սառնութեամբ իւր դիպումատիական յարաբերութիւնը լէշակերի հետ—պահպանելով պաշտօնական բոլոր ձեւակալութիւնները։ Այնտեղ կոտորում են, ամբողջ ժողովուրդը անխնայ սրի է անցկացնում, սուլթանի կառավարութիւնը առանց քաշելու շարունակում է իւր ոճրագործական ընթացքը, դիպումատիան դեռ խաղում է, դիպումատիան, որ այսօր բարձրաձայն յայտարարում է թէ Հայկական խնդիրը մարդասիրական է, պատուի ինդիր է իսկ փաստերը ինչ են ասում...

Ո՛չ, Տաճկահայաստանից դուրս ապրող հայ ժողովուրդ, ո՛չ, հերթ է յուսախարութիւնը, բաւակա՛ն է քեզ՝ աչքերը դառնալ եւ դիպումատիայից յուսան թո՛ղ եղբայրներիդ փրկութիւնը։ Ահա՛ քեզ նոր խոյր փաստ, եթէ բաւական չէ ին՝ ամենօրեայ փաստերը՝ որոնք նոյն ծաւալը եւ ոյժը չունեն...

Սասունից յետոյ Երզնկան՝—աւերակ, արիւնոտւած. դար-

ձեա՛լ պիտի սպասես, դարձեա՛լ յուսաս...

Մինչեւ ե՛րբ...
Քանի՛ցս դիմել են քեզ քո յեղափոխական գաւազները, —որոնք չեն ինչպե՛ս իրենց կեանքը զոհել,—օգնել, տալ իրենց՝ բարոյական աջակցութիւն եւ նիւթական օգնութիւն, բայց դու աւելի հակել ես դիպումատիայի կողմը եւ յոյսդ աւելի նրա վրայ ես դրել։

Քանի՛ցս նրանք իրենց օրգանների միջոցով քեզ հրաւէր են կարդացել՝ օգնել իրենց կուելու, տալով քեզ միշտ փաստ՝ որ կոխը շարունակում են, միջոց տալ վրէժինդիլ լինելու դու մի քանի կոպէկներ շարտելուց յետոյ, դարձեալ երեսուշուռ ես տեղ դէպի դիպումատիան եւ նրանից ես սպասում քո տաճկահայ եղբայրներիդ աղատութիւնը։

Քանի՛ցս է սոււած—ազատութիւնը չեն տալիս, այլ վերցնում են արիւնով՝, բայց դու, մի առ ժամանակ ոգեւորելուց յետոյ, դարձեալ թուլանում ես եւ էլի աչքերդ յառում դիպումատիային։

Ահա՛ եւ դիպումատիան իւր գործունէութեամբ.—ամբո՛ղջ տարի է անցել Սասունի սարսափելի եւ տևադ կոտորածից յետոյ, ի՛նչ է արել դիպումատիան, ա՛յն դիպումատիան, որ չա՛տ լաւ դիտէր, որ այդ թշուառ երկիրը եւ նրա դժբախտ գաւազները ենթարկւած են դժոխային շարչարանքի երկար տարիներից ի վեր։ Լռութի՛ւն, ահա նրա գործունէութիւնը՝ մի քանի դիպումատիական խաղերով մինչեւ Սասունի կոտորածը, դիպումատիական խա՛ղ՝ Սասունի կոտորածից յետոյ, եւ մինչեւ ե՛րբ պիտի հաւատաս Մինչդեռ այնտեղ, Տաճկահայաստանում, անամօթ սուլթանի կառավարութիւնը շարունակում է կոտորել, աւերել, բռնաբարել, տանջել, մինչդեռ քո եղբայրներդ յուսահատական խապտու ձայնով օգնութի՛ւն են ինչդում, օգնութի՛ւն։

Մի՛թէ դու դարձեալ կը շարունակես քո յոյսդ դնել դիպումատիայի վրայ եւ անտարբեր կը դանախ արեան մէջ խեղդեող եղբորդ ձայնին...

Ո՛չ, մենք ուզում ենք հաւատալ, որ դու կը սթափու, ձեռք կը տաս յեղափոխական գաւազներիդ, օգնութեան կը հասնեն արիւնաքամ լինող եղբորդ։

Աւերո՛ւմ են, կոտորո՛ւմ են, յառա՛ջ հայ յեղափոխական Աւերո՛ւմ են, կոտորո՛ւմ են—օգնութի՛ւն...

Զուլա

ՆՈՐ ՍԱՐՍԱՓՆԵՐ

I

ԵՐՋԱԿԱՅ ՊԱՇՏՄԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ. ՍՈՒԹԱՆԻ ԿԱՌԱՎՈՐՈՒԹԵԱՆ ՍՈՍԿԱԿ ԱՆԱՐԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ԲՈՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Օգոստոս 13-ին (ն. տ.) Քեմախու Գառնի գիւղի Թա-
 Տիր փաշայի խանին մօտ կը կողոպտւին գայմագամը, գօլ-
 աղասի մը և կսպանւի չաուուշ մը իւր դիմադրութեան հա-
 մար: Գայմագամը ինք զինքը գտնելուն պէս Երզնկայ՝
 միւշիր Ձէքիին կը հեռագրէ, թէ զիս կողոպտողը ու
 չափուշը սպանողը հայերն են. քանի մը սիւնքոր քիւր-
 դեր ալ նոյնը կը վկային: Յարմար առիթն էր խեղճ
 հայերը անգամ մը ալ կողոպտելու, ընկճելու, փչացնե-
 լու և Սասունի թուրք հերոսը՝ արիւնածարաւ Ձէքին,
 անմիջապէս հրաման ըրաւ ու Երզնկայ քաղաքն պա-
 շարման վիճակի ենթարկեց, որպէս զի քաղքին հայե-
 րը չէրնան հաղորդակցիլ կարծեցեալ հայ աւազակնե-
 րու հետ: Այս բաւական չհամարելով, անմիջապէս
 զինուորական հազարապետ Եավէր 200-ի մօտ ձիաւոր
 և հետևակ զինուորներով ճամբայ կենէ գեափուր աւա-
 զակները ձերբակալելու, բայց փոխանակ լեռները, ան-
 տառները դիմելու, շիփ շիտակ Աւագ վանք կերթայ:
 Վանքին մէջ գտնուողները՝ կարծելով թէ հիւր եկած են,
 կը ջանան պատասխել: Բայց Եավէրին հրոսակներուն
 թողլատրելի չէ քիչով գոհանալ, կը մերժեն ո և է
 հիւրասիրութիւն և յանկարծ վանքի պահապաններէն
 Խաչատուրեան Արիստակէսը և 'նազարը բռնելով՝ կը
 կապկպեն և հրացանը 'նազարի սրտին դնելով, կսպառ-
 նան զինքը տեղնիտեղը սպանել, եթէ աւազակներու ուր
 պահելը իմաց չտայ. մտրակով ալ ծեծել կսկսին:
 Ձինուորներուն նպատակը և խեղճ 'նազարի ու Արիստա-
 կէսի աղեկաւոր հեծեծանքը, ամբողջ վանքը ահ ու սար-
 սափի մէջ կը ձգեն.— կիներ կը նւաղին, մանուկներ կը
 ճւան, արք գազաններէն ազատելու միջոց կը փնտռին.
 վայնասունը կը տիրէ, իսկ զինուորները վանքը տակն ու
 վրայ ընելով, հետերնին կը տանեն 'նազարն ու Արիս-
 տակէսը դէպի Գառնի գիւղ, ճամբան միշտ աւարառու-
 թիւն ընելով: Հետևեալ օրն ալ Լուսաւորչի վանքը
 տակն ու վրայ ընելով և բաւ չհամարելով այնտեղ
 գտնուող խեղճերուն իրենց տւած սարսափելի նեղու-
 թիւնները, կսկսին անխնայ գանակոծել: Անկէ կը շա-
 րունակեն իրենց աւերիչ արշաւանքը՝ լեռնէ լեռ, ձորէ
 ձոր՝ ծեծելով, հայհոյելով ետևէն կը քաշկռտեն կապ-
 կալած պահապանները, միշտ ստիպելով, որ աւազակ-
 ներուն տեղը իրենց յայտնեն: Իզուր տղայք կերդնուն,
 թէ 'տեղեկութիւն չունինք ամենևին, այս օրեր աւա-

զակներ չկան": Բայց լաց ու կոծ, ուխտ ու երդում
 նշանակութիւն չունի Ձէքիի Եավէրին համար, նա
 ուրախացած է 'հայ աւազակները' անպատճառ
 գտնել և կոտորել: Եավէրի 200 հրոսակներու
 խումբը հետզհետէ երեք անգամ կստւարանայ՝ լրբերի
 բաշիբօզակներով և սոված քիւրդերով. այդ ահագին
 վոհմակը թաթառի մը պէս կիջնայ դարձեալ Գառնի,
 վրէժ լուծելու համար... տուներու կահ կարասիք
 ամբողջ կը յափշտակեն, հրացանի կոթով, սուրով, մու-
 րակով անողորմ կերպով կը ծեծեն ընդդիմացողն
 ալ, չընդդիմացողն ալ, երկ-մարդիկը կը կապ-
 կպեն և անոնց աչքին առջև՝ կիներ, աղջիկներ, պա-
 ուաներ, պատանիներ կը բռնաբարեն դիւային ոռնումնե-
 րով. տեսարանը սոսկալի է՝—արք ծեծերու տակ կը
 բղաւեն, մանուկներ ոտից կոխած կըլլան և կը... կի-
 ներու կացութիւնը քստմնելի... Լիշակներնրը Գառնի-
 են կը տարածւին եա յլայները (արօտավայրեր),
 գիւղին եզերը, կովերն ու ամբողջ ոչխարի հօտերը մէկ
 վայրկենի մէջ աներևոյթ կըլլան կանոնաւոր և անկա-
 նոն աւազակներէն. հովիւներն ալ կապկպելէ և ան-
 գթաբար ծեծելէ յետոյ, կառնեն կը տանեն:

Գառնիէն մարդակերպները՝ միշտ հրամանատարու-
 թեամբ Եավէրի՝ Լուսաւորիչ վանքը կը խուժեն, պահա-
 պանները նմանը չտեսնած անգթաբար կը հարւածեն:
 Եավէր բարձրաձայն կը յայտարարէ՝—'Ախմախ հայեր, Սասնոյ
 կոտորածէն խելքերնիդ գլուխնիդ չեկաւ, չիմա-
 ցաք, որ այն կոտորածը մենք ըրինք: Եթէ աւազակնե-
 րը ձեռք չի տաք, նմանօրինակ կոտորած մ'ալ հոս պի-
 տի ընեմ', և վանապետուհի կնոջ մազերը բռնելով,
 կսպառնայ կազի մէջ թաթխել և գլխիվար կախելով
 կրակ տալ, ինչպէս նաև ամբողջ վանքը: Իրենց հետ
 պտտցուցած կիսամեռ Արիստակէսին կսպառնան՝ եռա-
 ցեալ հաւկիթ մը թւին տակ դնելով, անշնչացնել: Այս
 և ասոր նման ամենասոսկալի տանջանքներ ու սպանա-
 լիքներ տեղացնելով, վայրագաբար այնչափ կը ծեծեն,
 որ ալ Արիստակէս նւաղած կիյնայ: Եավէր հօրեւբայր
 'նազարին կը բռնադատէ անեղիով մը հաճամաթ (մար-
 մինը տեղ տեղ ձեղքել և արիւն հանել) ընել, որ-
 պէս զի սթափի: Ածելի չգտնուելուն համար հաճամաթը
 կը կատարեն սրի ծայրով՝ սոսկալի պատուուրներ ձը-
 գելով Արիստակէսի մարմինն վրայ: Սթափեցնելու ինչ
 ճիւղային հոգածութիւն...

Լուսաւորիչ վանքի ինչքերը ամենն ալ կողոպտեցին՝
 եկեղեցւոյ անօթներ խլտեցին, կով, եզ, ոչխար և այլ
 կենդանիներ յափշտակեցին. կահ կարասիներէն աչքի
 եկածները կը թալնին, իսկ մնացածները ամենն ալ
 ջարդ ու փշուր ըրին. ապա բաւական թւով զինուոր

Թողով Հոն՝ իբր մշտակայ պատուհաս, Եավերի քաղաքատիկ բաշխօզուկները դարձեալ կը դառնան Աւագ վանք, ուր կսաստկացնեն իրենց անգութ արարքներ ու բռնաբարութիւններ. ձմեռան ամբողջ պաշարը թալանի կուտան, ոչխարները, որ միակ ապրուստն են վանքի բնակիչներուն, բոլորն ալ անյագաբար կը յօշոտին սադայէլ սուլթանին արժանի որդիներէն:

100-ի չափ զինւորներ և ասոնց չափ ալ թուրք ու քուրդ բաշխօզուկներ Շուխայի և ս. Յակոբի վանքերն ալ ցրւեցան և սկսան անհամար և անըսելի խժոժութիւններ գործ դնել կանանց, աղջկանց և մանուկներու վրայ...

Գառնի, Մարէկ և այլ Հայ գիւղեր կրկին և կրկին աւրշտկեւեր են կործանարար կերպով:

Երզնկայ պաշարած, վանքեր շղթայի տակ առնւած, ճամբայներ կտրւած են: Արեւ եղբայրներ ի՞նչ վիճակի մէջ են: մեռան, կորան, ջարդուեցան, տեղեկութիւն չունինք: Չենք գիտեր մենք ալ ի՞նչ եղանք և ո՞ւր կերթանք. անստոյգ, անապահով վիճակ, ահ ու սարսափով պաշարած ենք. ի՞նչ պիտի ըլլայ մեր վերջ: Քաղքիս մէջ 12—15 անձ ձերբակալեցին և կը չարչարեն. յանցանքին ամիս մ'առաջ վանք ուխտի երթալին է:


Կիրքը սահման չունի, ծեծ, հայհոյանք, թալան, բռնաբարում և սպանութիւն սովորական է: Ամեն սըրբութիւն, պատիւ, կեանք քմահաճոյքէ կախում ունին: Չէ՞ր բաւեր մեր և շրջակայից թշուառութիւնը, աղքատութիւնը: Հունձքի և գալիք տարւան սերմացանի ժամանակն է, ի՞նչ պիտի ուտենք, երբ մեր հունձք, արտ ու կալ արիւնախեղդ սուլթանի բաշխօզուկներու կողմէ իսպառ փչացան և կենդանիներու ճարակ եղան: Պատճառ գայմաբամ մը կողոպուտեր և չափուշ մը սատկեր է: Ո՞վ է մեղաւորը:

Երկու տարիէ ի վեր վանքերը և գիւղերը քիչ թալանւեցան, քիւրդերու բռնաբարութիւնները և կողոպտումները չապացուցեցան, միթէ մեր անհամար կրած վնասներու մասին պաշտօնապէս չբողոքեցինք կառավարութիւն ըսած ենիչէրիներու խմբին և անըսելի չմնացին: Դեռ քանի մը օր առաջ քաղքին մէջ, հրապարակին վրայ, խեղճ հայու մը դիակը, զոր քիւրդ սայլապանները սպանած էին, չգտնեցան: Ի՞նչպէս հասակցնենք, ի՞նչպէս գրենք, ի՞նչպէս պատմենք մեր քաջաներ, մեր տառապանքներ. տուն մնաց, տաւա՞ր մնաց, պատիւ մնաց. մեր կանաչք, աղջկունք, անպաշտպան հրէշներու գիրկն կը տապալտկին. ի՞նչպէս ազատինք: Ինչպէ՞ս ազատինք, որո՞ւ օգնութեան դիմենք, ո՞ւրկէ օգնութիւն յուսանք:

Ի ժ ո խ ք է ա յ ս, մ թ ն ո լ ո Ր տ ը ծ ա ն ր ա ց ե Ր է: Գ.

զօրաբանակ մեր վրայ կը թափէ իւր ուժը, օրէ օր նոր խժոժութեանց խուլ ձայներ կը հասնին. կիսամեռ ենք, լլկած ենք, անօթի ենք, մեռած ենք, օգնութիւն:

Օգնութիւն. ո՞վ հայեր, գոնէ դուք հասէք:



Կ Ռ Ի Ի Թ Ա Մ Չ Ա Ր Ա Յ Ո Ի Մ

(ՅՐԱՊԻՉՄՆԻԾ)

Հաստատ աղբիւրէ կիմանանք, որ Շապին Գարահիսարէն կէս ժամ հեռու՝ Թամզարայ գիւղաքաղաքի մէջ մեծ ընդհարում ունեցան հայեր և թուրքեր:

Տիկինեան հանգուցեալ Մարտիրոսի կինը թուրքէ ողի կը պատրաստէր: Քանի մը թուրք սրիկաներ կսկսին լիբր խօսքերով կինը անպատել և օղի պահանջել: Նոյն միջոցին հայ մը՝ Գըրքքէսէրեան Մովսէս անուն, կանցնի: Կինը պաղատաբար կը խնդրէ զինքը պաշտպանել սրիկաներու դէմ: Մովսէս առանց յուզումի կը խրատէ թուրքերը հեռանալ և ըսել թէ՛ եթէ անպատճառ կուզէք օղի խմել, տամ ձեզ 5-10 զրուշ գնացէք խմեցէք: Թուրքերը ոչ միայն մտիկ չեն ըներ, այլ անլուր հայհոյանքներ տեղալով կսկսին ծեծել հայը: Այս իմանալով ուրիշ հայեր վրայ կը հասնին և կուրը հետզհետէ կը մեծնայ, լայն ծաւալ կստանայ: Թուրքերը դանակով, կացինով, փայտով կսկին աջ ու ձախ հանդիպողին ծեծել, վերաւորել, սպանել: Շապին-Գարահիսարէն ալ 200-ի չափ թուրքեր զինւած, Թամզարա խուժելու կը պատրաստին թէև բայց կառավարութիւն տեսնելով, որ Շապին-Գարահիսարի հայերն ալ անգործ չեն, խոհեմութիւն կը համարի եղածով բաւականանալ և կը զսպէ:

Թամզարայի հայեր աղքատ ու խեղճ, անպատրաստ ալ գտնելով, կը տուժեն. տանեակ վիրաւորեալներ և մէկ երկու հատ ալ մեռածներ կան:

Թամզարայի 250 տուն հայերը, խանութիւն քոցած հեռացեր են քաղաքէն և Գարահիսարի գերեզմանատան մէջ, տեղացիներու հետ, վրաններու տակ կը բնակին անօթի, ծարաւ, ականջ չկանելով երբէք միւթէսարի՞ կառավարիչի խնդրանաց, որ իրենց տունները երթան:

Հայերը հաստատ երաշխաւորութիւն, ապահովութիւն կը պահանջեն: Հեռագրեր են պատրիարքարան:

Երզնկայ ալ անհաշիւ աւարառութիւններ եղած են. դիւղեր, վանքեր ամբողջ կողոպուտած են թուրք կառավարութեան կողմէ: Մանրամասնութիւնք կը պահանջեն:

Թուրք կառավարութիւն վերսկսաւ իւր բարբարոսութիւնները:

Կը հարցնենք.— Բարենորոգմանց ծրագրի մէջ արդեօք այս խժդժութիւնները ընել արտօնւած է: «Մարդասէր» դիպլոմատները թող տեսնեն իրենց գործած աւերները: Մեզ խաբելու ճգնեցան և մեր սիրտերը արիւնեցին: Թուրքերը վախցնել կեղծեցին և թուրքերը հիմա ալ աւելի գազանացան. շահատակութիւնները անսանձ կը շարունակին, կընդարձակին: Սասնոյ կոտորածի տարին չբոլորած, արդեօք նոր Սասուններ կուղէին տեսնել անգութները:

Բ Է Ֆ Օ Ր Մ Ն Ե Ր Ը

IV

Մենք նկատեցինք, որ դիպլոմատիայի առաջին հոգսը եղել է չդիպչել սուլթանի միապետական իրաւունքներին և ապա նա, դիպլոմատիան ծանրացել է պաշտօնեաների ինչ կրօնի լինելուն վրայ: Մինչդեռ այս երկու գլխաւոր կէտերի որոշումից կամ ձեւակերպելուց շատ բան է կախւած:

Եթէ մենք դուրս խնդիրները քննենք մեր տեսակէտից, մենք կասենք ուղղակի, որ միակ միջոցը բարեփոխելու Տաճկահայաստանի վիճակը, պէտք էր, որ երկրի ղեկը յանձնւէր իրեն ժողովրդին, որ ժողովուրդը ինքը լինի երկրի սուլթանը, գերիշխանը, ինչպէս էլ ասել ենք: Բայց հարցը այսպէս դնել ծրագրի գլխաւոր կէտերը քննելիս, կը նշանակէ կտրուկ կերպով վճռել խնդիրը և ուղղակի փակել վիճաբանութեան դռները ու գուցէ մինչև իսկ մեղադրենք ուսուպիստ լինելուն մէջ... Եւ ո՞վ գիտէ, գուցէ աւելի լաւը հենց այս էր: Բայց մեզ հարկաւոր էր բարձրացնել վարագործ ցոյց տալու ժողովրդին, թէ ո՞վքեր են բեմի վըրայ խաղացողները և ի՞նչ միտումներով: Ահա թէ ինչու ենք մենք ծանրանում ընթացքների վրայ: Այս հարկաւոր էր, որովհետև ներկայ դրութեան և պայմանների մէջ գտնուող ժողովուրդը, հեշտութեամբ կարող է բռնել ձողից, կարծելով թէ կարող է ազատւել խեղդելուց... Ուստի մենք խնդրի վրայ կը նայենք նոյնպէս և՛ հենց «Ննարակ» ու «գործնական» լինելու տեսակէտից էլ և կը տեսնենք, որ նոյն իսկ այդ տեսակէտից անգամ ոչ միայն անյաջող այլ մինչև իսկ անտակտ ու անմիտ էլ է:

Յայտնի է, որ Տաճկահայաստանի գլխաւոր չարիքը

ինքը ներկայ կառավարութիւնն է: Այս խոստովանւել են, գուցէ ակամայից, հենց իրենք եւրոպական պետութիւնները 56 թ. Պարիզի, 78 թ. Բերլինի դաշնագրութիւններով և վերջապէս ներկայումս ընթացքների ծրագրով: Ներկայ կառավարութիւնը մարմնանում է սուլթանականութեան մէջ, այսինքն սուլթանի իշխանութեան գաղափարի մէջ է ամիփուլում երկրի պետական կազմակերպութիւնը. իսկ սուլթանի իշխանութեան գաղափարն է միահեծան, ինքնակամ, ինքնիշխան կառավարութիւն, որը իր գոյութիւնը հիմնում է բռնուցքի, կեղեքումի, բռնաբարումի, տանջանքի, անպատուութեան և կաշառքի վըայ, որի դէմ էլ այսօր ամբողջ երկիրը արիւնով և վառօդով է բողբոջում:

Այժմ, դիպլոմատիան ի՞նչպէս է վճռել այս հարցը: Երկրի ամբողջ կառավարչական ղեկը թողնում է սուլթանական կառավարութեան ձեռքում—ամեն բան նրանից է կախւած, միայն, համեմատաբար նախկինի հետ, այն տարբերութեամբ, որ ներկայացրած ընթացքների ծրագրի հիման վըայ, պիտի «կիսապաշտօնական» ձևով իրենց յայտնին այն անձանց անունները, որոնց սուլթանական կառավարութիւնը նշանակում է միայն վալիի պաշտօնով. միւս պաշտօնեաների միւթէսարիճների, գայմագամների և այլոց մասին լուրթիւն է պահպանւած, որից պիտի կըրակացնել, թէ սուլթանական կառավարութիւնը ազատ է անօրինել ըստ իւր հաճութեան:

Չնայած, որ իրենք եւրոպական պետութիւններն էլ են խոստովանւում, թէ երկրի գլխաւոր չարիքը ինքը կենտրոնական կառավարութիւնն է, բայց և այնպէս, նոյն իսկ նրանց ծրագրած ընթացքներով, վերջինս աւելի քան մի անշան տարբերութեամբ պահպանում է իւր ամբողջ լիազօրութիւնը, ոյժը: Ասում ենք «աւելի քան մի անշան տարբերութեամբ», թէ և աւելի ճիշտ կը լինէր ասել առանց մի որ և է տարբերութեան, նախ որովհետև սուլթանի կողմից նշանակւած պաշտօնեան, որքան էլ լաւ լինի, եթէ կարելի է այդ թղլ տալ մի ըստէ, դարձեալ չի կարող համարւել ժողովրդի բարեկամը, պարզապէս այն պատճառով, որ ժողովրդի և սուլթանի կառավարութեան շահերը, քանիցս ասել ենք, ամենածայրահեղ կերպով մէկմէկու հակառակ են. — սրանք անհաշտելի թշնամիներ են, ապա, որովհետև վաղուց է յայտնի, թէ այս ձեւակաւութիւնը որքան արժէք ունի, եթէ մինչև իսկ նա պահպանւի. ոչ մի պետութիւն երբէք չի ցանկանալ այսպիսի «մանր խնդիրներում» սուլթանական կառավարութեան տհաճութիւն պատճառել, որի բարեկամութիւնը հարկաւոր է իրեն՝ պահպանելու տաճկական պետութեան

մէջ իւր շահերը: Բայց մենք կարող ենք ապահով լինել, որ այդ ձևակերպումները անգամ չի կատարուի, որին իբրև ապացոյց, առաջ կը բերենք միայն մի փաստ—Բերլինի հռչակաւոր դաշնագրութիւնը, որով սուլթանի կառավարութիւնը պարտաւորուած էր վեց մեծ պետութիւնների առջև ընդհանրապէս մտնել Տաճկահայաստանում և նրանց այդ մասին պարբերաբար տալ տեղեկութիւններ: Ինչպէս որ ջուրն են ընկել Բերլինի վճիռները, մենք կարող ենք հանգիստ խղճով դա էլ ջուրը ձգած համարել և երկիւղ չը կրել, թէ նորագոյն ընդհանրութիւնը կարող են վնասուել և հայ ժողովուրդն էլ կը տուժի...

Ուրեմն, ինչ տեսակեպից էլ վերցնելու որ լինենք, սուլթանական կառավարութեան ղեկավարող, կառավարող ոյժը մնում է ամբողջ անվնաս, նա պահպանում է իւր իրաւունքը և իշխանութիւնը, որ ասել է թէ, ինչպէս ասել ենք, չարիքը մնում է արմատում՝ պահպանելով իւր ամբողջ լիազօրութիւնը, կարողութիւնը:

Արդէն միայն հենց այս կէտը բաւական է ապացուցած համարելու, որ երեք պետութեան ընդհանրութեան Ծրագիրը «վիժմունք» է, որ նա չարժէ «իրեն թըղթին», որովհետև սրանից է շատ բան կախած, որովհետև սա է ամբողջ կառավարութեան մէքանիզմի շարժիչ ուժը. սա է այն կենտրոնը, որի շուրջը պտտում են մնացած միւս արբանեակները—պաշտօնեաները, հիմնարկութիւնները և այլն, սրանից է կախած երկրի այս կամ այն կառավարչական ձևը, նա է այն ոյժը, որի տրամադրութիւնով են վճռուում ժողովուրդների կեանքի պահանջները... և մինչդեռ սա մնացել է անվնաս, սա պահպանել է իւր լիակատար ոյժը և իրաւունքը: Երկրում տիրող կառավարութեան կենտրոնական ոյժը մնալով անփոփոխ, անփոփոխ է մնում տիրող ընդհանր, հետևապէս և երկրում ներկայումս գոյութիւն ունեցող իրերի դրութիւնը:

Դիպլոմատիան այս շատ լաւ է հասկացել, բայց հարկաւոր էր նրան թող փչել թէ բողբոջ ժողովուրդի և թէ անգլիական ու ամերիկական յուզած ժողովուրդի աչքին և մի ճարպիկ մանեօվրով աչքակապութիւն է արել—այն է, կենտրոնական կառավարութիւնից նշանակող գլխաւոր պաշտօնեայի մասին կիսապաշտօնական յայտարարութիւն է խնդրել, որով ուզեցել է հաւատացնել դժգոհ տարրերին, թէ ինքը հսկելու է ամենագլխաւոր պաշտօնեայի նշանակելուն վրայ, որից հարկաւ բաւականին բան է կախած, հետևապէս և չեն կարող այլ ևս տեղի ունենալ գազանային բարբարոսութիւններ և այլն, բայց որի անպէտքութիւնը

վերև ցոյց տւինք: Ոչ պակաս ճարպիկ մանեօվր է գլխաւոր պաշտօնեաների նշանակելը տրամադրել ըստ ազգաբնակութեան կրօնին: Բայց այս ճարպիկ մանեօվրը նոյնպէս այնքան առաձգական չէ, որ դժուար լինի ցոյց տալ նրա ոչնչութիւնը:

Մահմեդական և քրիստոնեայ կրօնին պատկանող ժողովուրդների փոխադարձ ատելութեամբ վերաբերելը թէև պատմական երևոյթ է, բայց նա իւր հիմքը ունի ոչ թէ ժողովուրդների գոյութիւնում, այսինքն, այդ կրօնական ատելութիւնը ոչ թէ բնածին է, ոչ թէ մի կենսական անհրաժեշտութիւն է, ոչ թէ նրա իրական կեանքի պահանջների հետևանքն է, այլ նրա մետաֆիզիքական հասկացողութեան, մտքի ու ըմբռման, որ իւր ոյժը կորցնում է ժողովուրդների տնտեսական կեանքում...

Արծնը մի անհրաժեշտ պայման չէ այս կամ այն ժողովուրդի գոյութիւնը պահպանելու համար, կրօնը գոյութիւն պահպանելու հիմք չէ:—Որքան էլ կրօնը համարւի ժողովուրդների կեանքում դեր խաղացող ֆակտորներից մէկը, բայց և այնպէս նա տնտեսական, ինչպէս և քաղաքական յարաբերութիւնների մէջ կորցնում է իւր նշանակութիւնը... Արծնը, մենք առիթ ենք ունեցել ասելու, մի դիմակ է սուլթանական կառավարութեան համար ծածկելու իր «յետին դիտումները». նա այսօր էլ մի գէնք է դիպլոմատիայի ձեռքին՝ քաղաքական մանեօվրներ անելու անհանգիստ հայ ժողովուրդի և անգլիական ու ամերիկական յուզած ժողովուրդի աչքին թող փչելու...

Հայ ժողովուրդի դժոխային դրութեան պատճառը կրօնը չէ. դա շատ անգամ է ցոյց տւած փաստերով. ուստի պաշտօնեաներ նշանակելու ժամանակ ղեկավարել կրօնով կամ կրօնը ընդունել իբրև հիմք, այդ նշանակում է դարձեալ դրութիւնը նոյնը թողնել. դա միայն դիպլոմատիկական խաղ է, աչքակապութիւն է, այն էլ ոչ շատ յաջող: Մի թէ հարկաւոր են ապացոյցներ հաստատելու, որ քրիստոնեայ պաշտօնեաները նոյնքան վատ կարող են լինել, որքան մահմեդականը, որ քրիստոնեայ պաշտօնեան էլ կարող է նոյնպէս չարիք լինել երկրի համար, ինչպէս մահմեդականը, որ նրանք էլ կարող են լինել մի-մի Ձէքի, Քահաթի, Բահրի փաշաներ. դրանում ոչ մի կասկած չը կայ և մենք երբէք կարիք չենք զգում ապացոյցներ բերել հեռուից. բաւական է հենց մէնակ մատնացոյց անել սուլթանի կառավարութեան այժմեան քրիստոնեայ պաշտօնեաների վրայ, ինչ ազգից էլ ուզում էք լինին: Սրանցից իւրաքանչիւրը խոնարհ և հաւատարիմ ծառայ—ստրուկն է սուլթանի և նրա կառավարութեան: Նշանակութիւն ունեցողը ինքը մարդն է իւր

էութեամբ, իւր հոգով ու գաղափարով, իւր բնաւորութեամբ և համոզմունքներով: Ինչ պաշտօն ուզում էք տէք մարդուն, որքան էլ նա դուած լինի նպաստաւոր կամ աննպաստ պայմանների մէջ, որքան էլ նա պէզանտ բնաւորութիւն ունենայ և օրէնքի իւրաքանչիւր կէտը սրբութիւն համարելով՝ աշխատի մազաչափ անգամ չշեղուել, գարձեալ նա՝ մարդը իւր պաշտօնին տալու է իւր անհատական գոյնը, նրա գործունէութեան մէջ արտայայտելու է իւր էութիւնը, իւր համոզմունքը, գաղափարը, իւր հոգին: Արդէն մէկը, որ սուլթանի կառավարութեան պաշտօնեան է, կրօնը երբէք նրան արգելք չի լինիլ կոտորած անել, եթէ «կենտրոնը» սուլթանը կամ Բարձր Դուռը հրամայում է. տարբերութիւնը կը կայանայ միայն գործի ծաւալի և ոյժի մէջ: Եւ քրիստոնեայ նուրեանը կարող է լինել մահմեդական օւէքին, առանց որ և է տարբերութեան, եթէ նա, իբրև մարդ, նոյնքան գաղան է: Հայ ժողովրդի տանջանքին վերջ դնողը քրիստոնեայ պաշտօնեան չէ և չի էլ կարող լինել. կրօնը անգոր է և մի դիմակ: Պաշտօնեան ինչ կրօնի էլ ուզում է լինի, քանի որ կենտրոնական կառավարութիւնը պահպանում է իւր նախկին ոյժը, իւր լիազօրութիւնը, քանի որ «շարժիչ ոյժը» չի կրել ոչ մի դրական փոփոխութիւն, իրերի դրութիւնը չեն փոխիլ, և ներկայ դժոխային կեանքը ամբողջովին պահպանում է իւր քայքայիչ, աւերող, ապականող ու անբարոյականացնող ոյժը: Բայց որպէս զի չմեղադրուեք գիտակցաբար զանցառութեան մէջ, մենք կը շօշափենք ուրիշ կէտեր ևս:

Գրուեալ

Դ Ա Ի Ա Ճ Ա Ն Մ Ա Մ Բ Ի Է

ԿԱՐԳԱԼՈՅԾ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Դ Ա Տ Ա Պ Ա Ր Տ Ո Ի Թ Ե Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ Ը

Կ. Պոլսի Կեդրոն. Կօմիտէի յունիս 10-ի 67-րդ նստին մէջ, — որ յատկապէս գումարաւած էր քանի մը դաւաճան յեղափոխականներու վերաբերեալ ստուգարանները քննութեան ենթարկելու, 90-թի մատնութիւններուն մէջ անոնց խաղացած դերը ճշտելու համար, — կարգաւեցան նաև Մամբրէ կարգալայծ վարդապետին կատարած դաւաճանութեան և մատնութեան վերաբերեալ թղթերը և անոր վերջին հինգ տարիներու զբեղի գործունէութեան մասին տեղական կօմիտէներու կողմէն կազմած տեղեկագրերը, որոնցմէ տեսնեցաւ, որ Մամբրէ, աշխարհական անունով Ալեքսան, նախկին սարկաւազ Էջմիածնի միաբանութեան, ապա վարդապետու-

թեան կոչած Բագրևանդի ս. Յովհաննէս վանքին մէջ, առաջին օրէն ճանչցած է իր շրջապատողներէն, իբր դիւրագրգիռ, հեշտամոլ և մնափառ մարդ մը, որ իր կրքերուն գոհացում տալու համար, միջոցներու մէջ խտրութիւն դնել չէր գիտէր:

Վարդապետութեան առաջին ամիսներուն մէջ իր քանի մը պոռոտախօս քարոզներուն շնորհիւ աժան ժողովրդականութիւն մը վաստկեցաւ, մանաւանդ Տրապիզոնի մէջ խօսած մէկ յանդուգն բանախօսութենէն ետքը, որ ինքզինքը յանձնարարեց իբր կարմիր յեղափոխական մը:

Ալ մոռցեցաւ իր նախկին կեանքը, լի անբարոյական արարքներով, և յեղափոխական խմբեր միամտաբար հաւատ ընծայելով անոր այդ սնամէջ բառերուն, խելամուտ ըրին այդ ողորմելին իրենց վարչական գաղտնիքներուն:

Վրայ հասաւ 1890 թ. յուլիս 15-ը, գործի և փորձի թւական մը, որ մաղեց ու զտեց այդ գործիչներուն խումբը, բուն յեղափոխականները անջատելով միայն այդ անունը շահագործողներէն: Վախկոտներն ու դձուծները իրենց դիմակները դրին Նազըմին ոտքը, անոր խորագետ վեհանձնութեան դիմում ընելով, իրենց ողորմելի կեանքին քանի մը անփառունակ տարիներ ալ աւելցնելու և մէկ-երկու ոսկի մուրալու համար գետնաքարը:

Մամբրէ իր վրայ եղած կասկածները ցրելու նպատակով Բագրևանդ գնաց, իր վանքը բայց հոն հանգիստ չտւին իրեն: Իր նախկին քարոզները մոռցած չէին և ոստիկանութիւնն աւելի հիմնաւոր սկսաւ համարել իր կասկածները Մամբրէի վրայ: Քիչ օր ետքը Մամբրէն հարկադրեցաւ Պոլիս վերադառնալ:

Չերբակալութիւններու թւականը բացած էր ոստիկանութիւնն անխոնջ խուզարկութիւններ կը կատարէր յուլիս 15-ի հեղինակները գտնելու համար: Իսկ միւս կողմէն պատրիարքարանն անկարող էր ոչ միայն իր կրօնակիցները պաշտպանելու, այլ նոյն իսկ կրօնաւորները:

Նազըմ Աշըգեանէն հօգր էր:

Մամբրէն առաջին կողմը հակեցաւ պատուակ մը պէտք էր. ադ ալ գտաւ խմբագրեց ազդարարագիր մը իբր «Հնչակ»-եան մասնաժողովին կողմէն իրեն ուղղած, որով մահ կըսպառնային իրեն, եթէ շարունակէր իր դաւադրութիւնները անոնց «Հնչակ»-եաններու դէմ:

1890 սեպտեմբեր 9-ին երեկունը դաւաճանը այդ նամակով կը ներկայանար ոստիկանութեան նախարարին՝ Նազըմ պէյին և անոր օգնութիւնը հայցելով, փոխարէն ամէն աջակցութիւն կը խոստանար իր կողմէն կառավարութեան թշնամիները որսալու գործին մէջ:

Նազըմ պէյի ուրախութեան չափ չկար: Նոյն գիշեր իր տունն հիւրընկալելով ամէն մեծարանքներ ըրաւ անոր, և հետեւեալ առտուն առաջնորդել տաւ զինքը ոստիկանութեան դուռը հարցաքննիչ գատաւորին առջև բացատրելու իր գիտցածը:

Այդ առաջին հարցաքննութեան մէջ Մամբրէ շատ բան բացատրեց, շատ անուններ տաւ, բայց ըրաւ աւե-

լի մեծ բան մը. խոստացաւ ցանկ մը պատրաստել իր կասկածելի համարած անձերուն, վաւերական թղթերու վկայութեամբ հաստատուած: Եւ Մամբրէն այնչափ խըղճմտութեամբ կատարած է իր այդ խոստումը, որ հարցաքննիչ դատաւորին առջև իբր յանցապարտ մը ներկայանալու երկրորդ հարկի մը մէջ չէ գտնուեր, բան մը, որով կապացուցւի միայն մէկ հարցաքննութեան մը գոյութիւնը ոստիկանութեան պաշտօնատան մէջ: Մամբրէն այնուհետև գործեր է իբր գաղտնի ոստիկանութեան անկախ պաշտօնեայ, անմիջաբար 'Նազըմ' պէյի հետ յարաբերութիւն հաստատելով:

Այդ առաջին հարցաքննութեանէն ետքը Մամբրէ 100 օսմ. ոսկի ստացաւ իբր քաջալերութիւն:

Անկէ ետքն է, որ Մամբրէ Մուրատին անունով ֆրանսիական փոստան ստացած նամակները տարաւ յանձնեց ոստիկանութեան, այդ նամակները յակնէ անւանէ կը նշանակէին քանի մը անձեր և կը յիշատակէին նոյնպիսի իրողութիւններ, որոնք նպատակեցին պարզելու յեղափոխական կազմակերպութեան մասին թուրք ոստիկանութեան քանի մը ենթադրութիւնները:

Հարցաքննութեան մէջ յիշատակած ցանկը Մամբրէ հետզհետէ լրացուց, և մասնեց ով որ կրցաւ: Իր դերը չմնացաւ արով. անգամ մը գայթեկէն ետքը ալ չփորձեց ոտքի ելլալու: Մոռցաւ ամեն բան, ինչ որ սուրբ էր, իր եկեղեցին ոստիկանութեան դուռն էր հիմա. իրեն պաշտօնն համարեց ոչ միայն քիչ շատ աչքի զարնող անձեր իբր կասկածելի երևցնել, այլ և խեղճ ու անտէր մարդիկ շահագործել բանտ նետելու սպառնալիքով կամ բանտէն ազատելու խոստումով:

Իր շահատակութեան ասպարէզն եղած էր Իւսկիւտար արուարձանը, ուր ամէնքն ալ կը դողային այդ լիբը ու անխիղճ վարդապետէն, որ անգամ մը եկեղեցական կոշուռն զրկած, ալ ազատ կը կարծէր ինքզինքն իր կրքերուն անձնատուր ըլլալու, անպատիժ մնալու յուսով:

Մամբրէն արեան ծարաւ դաւաճանի մարմնացումն էր, որ իր նեխած սիրտը կը պտտցնէր ամէն տեղ, ոստիկաններու և լրտեսներու ընկերակցութեամբ:

Ժողովուրդը վաղուց արդէն իր վճիռը տուած էր: Ուստի,

Ի նկատ առնելով, որ Մամբրէն դաւաճանած է իր յեղափոխական ուխտին,

Ի նկատ առնելով, որ իր կուսակցութեան վերաբերեալ գաղտնի նամակներ ոստիկանութեան յանձնած է և իր ընկերները մատնած է,

Ի նկատ առնելով, որ Մամբրէն իր անօրինակելի արարքը վայրկեանական վախի մը ազդեցութեան ներքև կատարած չըլլալէն չափ, գործօն մատնիչ մը եղած է հինգ տարիէ ի վեր, տասնեակ ընտանիքներու անկման և հարիւրաւոր անմեղներու դժբախտութեան պատճառ ըլլալով,

Ի նկատ առնելով, որ Մամբրէն իր լիբը, ամբարտաւան ու անբարոյական վարմունքով գայթակղութիւն եղած է ժողովուրդին մէջ, անոր ամենէն նւիրական զգացմունքները վիրաւորելով,

Կեդրոնական կոմիտէն յուսիս 10-ի իր 67-րդ նստին մէջ

Միաձայն մահաւան դատապարտեց դաւաճան Մամբրէ կարգաւոյժ վարդապետ Պէնլեանը:

Ղճուին գործադրութիւնն յանձնելով Ռուսի կոմիտէի Ա. խմբի ահաբեկիչներուն, և միանգամայն վճռեց սոյն Տեղեկագրին հետ հրատարակութեան տալ նաև պատձենները անոր առաջին հարցաքննութեան, և հնչակականներուն անունով խմբագրած ազդարարագրին:



Ղճուին գործադրութիւնը չուշացաւ. յուսիս 22-ին, շաբաթ գիշեր, Իւսկիւտար Պէյլերի պարտեզը տաճկերէն ներկայացում կար. ամեն ազգէ հոն բազմութիւն մը ներկայ էր. հոն էր նաև Մամբրէ, երկու ծպտեալ լրտեսներու հետ: Ժամը 2-ին ներկայացումը վերջացած էր և ամբոխը սկսած էր ցրուել խումբ խումբ: Գուրս ելաւ և Մամբրէն իր ընկերներու հետ, դժգոհ թերևս, որ այդ գիշեր որս մը չկրցաւ գտնել. նախորդ ներկայացումի մը միջոցին անծանօթ ձայներ սուլած էին Համիդիէ քայլերդը. Մամբրէ կը յուսար այս անգամ անձամբ հսկել և գտնել սուլողները: Սակայն հազիւ քանի մը քայլ ըրած էր դէպի պարտեզին դուռը, երբ երկու ահաբեկիչները կը տնկւին իր առջև և մէկը կարձակէ իր ռեվոլվերը: Գաւաճան սոսկալի մոնչիւնով մը գետին տապալեցաւ. գնդակը խորտակած էր ողնայարը, ծակած երիկամունքը և կողաշարին մէջ մտնած էր:

Ռեվոլվերի ձայնը և դաւաճանին գետին թաւալելն աննկարագրելի իրարանցում և վախ պատճառեց. ժողովուրդը փախչող փախչողի էր. ոստիկաններն ու զինուորները մէկ ակնթարթի մէջ անյայտ եղան:

Անցին ահաբեկիչները, կընթանային անվորով, երբ լրտես մը պատահմամբ դէմերնին կելլայ. ահաբեկիչը գրնդակ մըն ալ անոր կը խրկէ. թուրքը գետին կիյնայ:

Մամբրէ մնաց իր ընկած տեղը, մինչև որ ոստիկանները սիրտ առնելով, վերջապէս վերադարձան, երբ ապահով եղան, որ ալ ահաբեկիչները հեռացած էին, և շալկելով տարին իր տուն:

Գաւաճանը չորս օր հազիւ կրցաւ ապրել և չարաչար տանջուելէ ետքը, յուսիս 26-ին, չորեքշաբթի սատկեցաւ, խոր սուգի մէջ ձգելով 'Նազըմ' փաշան:

Մամբրէի մահը մեծ յուզում առաջ բերաւ ամեն շերջանակներուն մէջ:

Ոստիկանութիւն մեծամեծ ճիգեր կընէ հեղինակները որոնելու, ուստի բազմաթիւ ձերբակալութիւններ կատարեց ապարդիւն. ցարդ ձերբակալած են մօտ 150 հոգի, բոլորը անմեղ մարդիկ: Կըսուի թէ բանտարկեալներուն սոսկալի չլսած, աներևակայելի տանջանքներ կուտան գաղտնիքներ կորզելու համար: Իսկ ահաբեկիչներն ապահով ու ազատ են շնորհիւ սուլթանին, որոնք կըսուի թէ աներևոյթ ոգիներու փոխած են...

Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ

Խ Ա Ր Ա Խ Ա Ն Ե Ա Ն
Ն Ե Ր Ս Է Ս Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ

I

Տարօնի ժողովրդի ինքնաձանաչութեան արթնանալու գործում առաջնակարգ դեր կատարածներից մէկն է անշուշտ այնտեղի առաջնորդ Ներսէս վարդապետ Խարսխանեանը: Իւր անձնէր գործունէութեան համար, իբրև ժողովրդական հովիւ, նա տաճիկ բռնակալ կառավարութեան կողմից կրեց ամենայն հայածանք, և վերջին մի քանի տարիները անցկացրեց բանտում, որից ազատուց միայն վերջին ժամանակները՝ պատրիարքի և Լալրոպական դեսպանների ազդու պահանջումների շնորհիւ: Այդ նշանաւոր անձնաւորութեան վերջին տարիների գործունէութեան և բանտարկութեան մասին մենք ամենահաստատ աղբիւրներից քաղեցինք տեղեկութիւններ, որ և հաշխատենք առաջ բերել այս յօդուածում:

1880 թւականին Ներսէս վարդապետը ընտրուց Բղիի առաջնորդ: Նա գտաւ այդ թեմի ժողովուրդը ենթարկած զանազան հարստահարութեանց, որոնք յառաջ էին գալիս տեղական կառավարութեան թոյլտուութիւնից: Գլխաւորապէս քրդերը, տասանորդէ արոց վարձակալք և հարկահան զինուորք Բղիի հայ ժողովրդի պատուհասն էին եղած: Ներսէս վարդապետը յորդորում էր ժողովրդին և դրդում ինքնապաշտպանութեան միջնոցն ժամանակ, իբրև ներկայացուցիչ հայ ժողովրդիին, նա անդադար հրաւիրում էր կառավարութեան ուղղորդութիւնը տեղի ունեցած զեղծմանց, զրկանքներու և հարստահարութեանց դէմ: Սակայն կառավարութիւնը փոխանակ չարեաց դարման տանելու և ժողովրդի վիճակը ապահովելու գանգատներ ուղարկեց առաջնորդի դէմ: Կարնոյ կուսակալութեանը, ամբաստանելով, որպէս թէ նա ժողովրդին կը քաջալերէ զէնք առնել և կառավարութեանը դիմադրել: Կարնոյ կուսակալութիւնը քննութիւն բացաւ, բայց ապացոյցներ չկրցաւ գտնել: մեղադրում էին նրան, իբր թէ Տերսիմի Շահ Հիւսէին պէյի հետ դաշնակցած է հայերու և քիւրդերու միջոցաւ խռովութիւն հանելու: Հիւսէին բանտարկեցաւ, բայց վերջ արձակեցաւ:

1889 թւականի սկիզբը Ներսէս վարդապետը եկաւ Մուշ իբրև ընդհանուր վանահայր-առաջնորդ ս. Կարապետի վանուց, և Տարօնոյ Մշոյ վիճակի հայոց հասարակութիւնը շատ հին էր. մանկութիւնից նա այդ պատմական աշխարհի մէջ ծնւած և մեծացած լինելով, շատ աղետների ակնատես և ակնաշարուր եղած էր: Կար ժամանակ, երբ գրեթէ կառավարութեան սուէրը կար, և քրդական տիրապետութիւնը միայն կը տեսնէր. տակաւին երևան չէր ելած ընդդէմ հայոց այս խորին և մահացու ատկութիւնը, որ կսպառնայ հայ ազգը բնաջինջ անել զանազան դիւահնար մեքենայութիւններով և բարբարոսութիւններով: Իբրև ա-

ռաջնորդ, Մուշ մտնելուն պէս քաջարի հովիւր ակըն-յայտնի նկատեց այս հանգամանքը, թէ կառավարութեան գործողութիւններից և թէ քրդական արձակ համարձակ վարմունքից: Նրա պաշտօնավարութեան առաջին տարին Մուսա բէյը աննկարագրելի չարիքներ էր գործ դնում հայերի վրայ. նրա դէմ թէ գիւղացիք և թէ առաջնորդը խիստ բողոքեցին. Մուսա բէյի վախճանը յայտնի է: Նրա Պոլիս տարւելուց անմիջապէս յետոյ Մշոյ կառավարիչ Էօմեր Էաթըրի փաշան առաջարկեց Ներսէս վարդապետին, որ Մուսա բէյի դատելու առթիւ սուլթանին շնորհակալութեան հեռագիր քաշի և ժողովրդի անդորր վիճակը ցոյց տայ: Նա մերժեց այդ առաջարկը և ժողովուրդը, որ հայոց վիճակը երբէք փոփոխութիւն չէի կրած:

Մի տարի անցած վարդապետը վերադարձեցաւ. կառավարութիւնը սաստիկ վիճակաւ Խարսխանեանից նրա խիստ դիմադրութիւնների պատճառով, այդ միջոցին էլ Մշոյ կառավարիչ Սայիդ փաշան նրան անաշարից կնքել մի գրութիւն, որ պարունակում էր իր մէջ շնորհակալութիւն Բաղէշի ընդհանուր դատախազի մասին. այդ ևս մերժեց: Հետզհետէ կառավարութեան պաշտօնեաների զեղծմանը ծանրացաւ, հարստահարութիւնք և աւարառութիւնք չափն անցան. ժողովրդի և առաջնորդի բողոքները անյետի մնալով՝ կառավարական պաշտօնեայք, ոստիկանութեան սպայք, միւլտիպլիպները և քիւրդ աղաները սկսում են խիստ ատելութիւն ցոյց տալ դէպի առաջնորդը: Իսկ վերջինս շարունակ ամեն շաբթու դէպքերը մանրամասն կը տեղեկագրէր պատրիարքարանին: Մշոյ տեղական կառավարութիւնը նրա բոլոր գրութիւնները ծածուկ կարդում էր, և ատելութիւնները դէպի նա սնունդանում:

1891-ին Մշոյ կառավարիչ Սայիդ փաշան, յիշեցնելով Խարսխանեանին, թէ շատ գաւառներու առաջնորդներ և պատուար հայերը շնորհակալութեան հեռագիրներ են ուղարկում կայսերական պալատը՝ առաջարկում է, որ նա էլ նոյնը անի. բայց նա կրկին մերժում է:

1891-ի վերջերը Քահալի Փաշան Բաղէշի կուսակալ եկաւ: Նորա բոլոր ջանքն եղաւ քաղաքական յանցաւորներ գտնելու պատուակի տակ և ահ ու սարսափ տարածելով իւր անյագ արծաթսիրութեան և փառասիրութեան խաղը խաղալ և հայերը ընդելու ծրագիրը գործ դնել: Մուշէն շատերը ձերբակալել և հարևանցի քննութեամբ, մեծաւ մասամբ սուտ վկաներով, դատապարտել տւեց: Նորա և Մշոյ պաշտօնէից հոգեկան մեծ ջանքն եղած էր բոլոր ձերբակալածներին ստիպել խօսելու Խարսխանեանի դէմ, նրան անբաստանելու. այդ բանի համար նա թէ գիւղացի և թէ քաղաքացի հայերից շատերին մեծ մեծ գումարներ և պաշտօններ է խոստացել: Նեսէս վարդապետը այդ բոլորը իմանալով հանդերձ՝ անյողողը շարունակում էր իր պաշտօնը և աշխատում էր պատրիարքարանին համոզել՝ ամենայն ճիւղ թափելու կործանման ծայր հասած այս գաւառներու ժողովրդի ազատութեան համար:

Այս միջոցին պիտի կատարւեր ամենայն Հայոց

Հայրապետի ընտրութիւնը. հրաւեր ստանալով էջմիածին երթալու, ներսէս վարդապետ դիմեց կառավարութեան պատարտ առնելու: Կառավարութիւնը առանց որոշ պատասխանի յետաձգեց նրա երթալը. դիմեց պատրիարքարան. բայց բոլոր դիմումները ապարդիւն մնացին:

Ն Ա Մ Ա Կ Բ ՈՒ Լ Ա Ն Ը Ղ Ի Ց

Քննիչ Յանձնաժողովը եկաւ Մուշ. նա «աչքով տեսաւ, ակննով լսեց, ձեռքով շօշափեց» տաճկահայերիս դարեւոր տանջանքները, թշուառութիւնները... Այդ ամենը վաղուց, շատ վաղուց յայտնի էր եւրոպական տէրութիւններին իրանց ներկայացուցիչների տւած անթիւ տեղեկագրերից, բայց և այնպէս Եւրոպան հազար և մէկ երրորդ անգամը հարկ համարեց արձանագրել Յաճկահայաստանի դժոխային վիճակը... Թէ ի՞նչ հետեւանք կունենան Քննիչ Յանձնաժողովի արձանագրութիւնները—կպարզւի մօտ ապագայում: գալով ներկային պէտք է ասել, որ Յանձնաժողովի գոյութիւնը մազաչափ չի խանգարում գաղանաբարոյ քրդերին, սուլթանի սրիկայ պաշտօնեաներին և զօրքերին շարունակել իրանց սպանութիւնները, թալանումները, բարբարոսութիւնները, լցնելով բանտերը Յանձնաժողովի քթի տակ գտնուող անմեղ, անպարտ գիւղացիներով..

Դիմենք փաստերին: Բաղէջցի վաճառական մը, խրախուսուած Քննիչ Յանձնաժողովի Մուշ գալով, ապրանք բերած Ղարաղըլ գիւղը առևտուր կանէր. ջլգրանցի Ֆէյլի աղայի որդի Սուլէյման աղան իր ծառաներով գիւղ մտնելով և տեսնելով վաճառականին, թալանեց խեղճին, խլելով նորա թէ ապրանքը և թէ ունեցած փողերը: Այդ տեղի ունեցաւ օրը ցերեկով, ժամը 3-ին, բայց և այնպէս գիւղի մէջ տէրութեան կողմից նշանակած կանոնաւոր զինուորները և պահապանները, որոնց ապրուստը կը հոգայ աղքատութեան մէջ հեծող գիւղը, տեսնելով այդ ամեն թալանումը, կը խնդային, ձայն չհանելով, որովհետև կողոպուած ապրանքի և փողի մի մասըն էլ իրանց պէտք է հասնի...

Թէկուտ գիւղէն մարդ մը մի քանի տարի Կոստանդնուպոլիս աշխատելուց յետոյ ապրիլի 11-ին մտաւ Ղարաղըլ գիւղը, ու գիշերը հանգստանալուց յետոյ, առաւօտեան ձանապարհ ընկաւ դէպի հայրենի գիւղը: Ղարաղըլ գիւղի պահապաններից մէկը, իմանալով այդ կը հետևէ ճամբորդին և գիւղից մի ժամ հեռուորութիւն ունեցող կամուրջի մօտ բռնելով խեղճին, կը խլէ փողը, սպանելով նորան. անբարդ հայը երկար տարիների պանդխտութիւնից յետոյ գէթ մի օր չտեսաւ իր սուունը, ընտանիքը, որին այնքան կարօտել էր և որի տեսութեան մի քանի ժամից յետոյ պէտք է արժանանար...

Բերած երկու օրինակների սման հազարներով կարելի է թելել, բայց այդ չէ մեր թղթակցութեան նը-

պատակը, այլ ահա թէ ինչ: Քննիչ Յանձնաժողովը գալուց յետոյ գիւղացիներից քաջասիրտները մի քանի անգամ փորձեցին Մուշ գնալ իրանց տանջանքները, չարարանքները «քրիստոնեայ ազգերի» ներկայացուցիչներին յայտնելու համար, բայց չկարողացան, բանտ նետուելով և անասելի ծեծ ու տանջանքների ենթարկուելով, շատ քչերին յաջողեց Յանձնաժողովին ներկայանալ... Դոքա են նեմջաշեղ գիւղացի Յակօն և Սագօն, Շիրվանշեղ գիւղացի Ղազար աղան, Յոյտնչար գիւղացի Հայրապետ և Եօնջալու գիւղից երկու մարդ: Այդ անձինքները վերադառնալուց յետոյ բանտարկուած են և մինչև այսօր էլ այնտեղ կը տառապեն, իսկ վերջի շեղ գիւղերի իւրաքանչիւրից 10-20 հոգի, որոնց վրայ անտեղի կասկած է եղել, որ կամենում են Յանձնաժողովին ներկայանալ, դեռ առաջուց էին բանտարկուած: Դոցա մի մասը կաշառք տալով աղատուած է, միւս մասը դեռ բանտում կը գտէ. 50-ի չափ էլ այլ անձինք անմեղ տեղը բանտ նետուած են. դոցա կը դատապարտեն նրանում, որ իբր թէ նոքա 6 տարի սորանից առաջ թուղթ մը գրած են և ուղած իրանց առաջնորդին, որ ձանաչուած է եղել, որպէս իբր թէ քաղաքական յանցաւոր: Խօսք կը տան այդ անմեղներին ազատել, եթէ կաշառք տալու լինեն, բայց փարաչկայ և խեղճերը կշարունակեն բանտ նստել...

Խօզգետալդի գիւղում Միրզայեան Գասպար հարուստ մը կայրէր. նորան շատ և շատ անգամ են բանտարկել և ամեն անգամ 50-60 ոսկոյ չափ կաշառք վերցնելով ազատել. հենց կաշառք տալով խեղճ մարդը սնանկացաւ, աղքատացաւ. այս տարի նորից բանտ ձգեցին խեղճին իր որդի Սաղաթէլի հետ. այլ ևս հարուստ չէր և ձեռք եղած-չեղած փարան տալով, կարողացաւ ազատել իր որդի Սաղաթէլին, համաձայնելով ինքը բանտում նստել, մինչև որ Սաղաթէլը փարա աշխատելով, իրան կազատէ: Եւ այսօր Սաղաթէլը յայտնի չէ, թէ ուր պանդխտութեան ցուպը ձեռին կամենում է փարա ձեռք բերել ծերունու հօր բանտից ազատելու համար... Մինչ որդու վերադառնալը չի մնանիլ արդեօք՞ հայրը բանտում, կամ որդին ողջ և առողջ յետ կը դա՞նայ...


Առք գիւղի բանտատունը լիբ լեցուն է: Բաքաւոնի գիւղի ուէր մէկ անձի հետ նորերս բանտ ղրկեց. իսկ, Թոտամ-Գետուկ, Խօթանլու, Շիր, Յատկանայ, Փրօնկայ, Յագրկու, Միրզարայ և Բլուր կոչուած գիւղերից իւրաքանչիւրից 5-7 մարդ բանտարկուած են, ուր կը շարունակեն տանջել, իրանք էլ չիմանալով, թէ ինչու են բանտարկուած և ե՞րբ պէտք է ազատեն... Եթէ մէկը ուրիշ գիւղ մը երթայ և փօլիցադիր հետը չունենայ, նա թէկուզ ծանօթ լինի պահապաններին և ոտտիկաններին, կը ձերբակալուի և դէպի Կոք գիւղի փօլխսխանին կտանուի, ուր մի քանի շաբաթ բանտարկուելուց յետոյ կազատուի, եթէ 10-20 ոսկի կաշառք տալու կարողութիւն կունենայ. հակառակ դէպքում ազատութիւն չկայ...

Ղարաղըլ գիւղէ Միսակ անունով տղայ մը Խնուս երթալով, միւս օրը յետ դարձաւ, գալուն պէս խօլիկները

(պահպանները) «փոխցադիրդ ուր է» ըսելով, ձերբակալեցին և Կոբ դեւղ փոխխմանէն տարին, ուր մի քանի օր բանտ նստելով և 15 ոսկի կաշառք տալուց յետոյ, ազատեցաւ...

Այդ անթիւ, անհամար ձերբակալութիւնների, անտեղի և անարդար կաշառքների վրայ աւելացրէք հարկերի անասելի ծանրութիւնը, անգուժ թրդերի, բարբարոս զօրքերի և պաշտօնեաների թալանուծները, սպանութիւնները, հայաճանքները, հարստահարութիւնները, հայ աղջկանց և կանանց վրայ ամեն օր գործադրուող անարգ բռնակալութիւնները և դարձեալ շատ շատ չնչին գաղափար կազմած կը լինէք իրերի այն դատան վիճակի մասին, որ տիրում է Յաճկահայաստանում, ամայի դարձնելով երկիրը...

Մինչև ե՞րբ պէտք է շարունակուի այդ դժոխային կեանքը... մի՞թէ վերջ չունեն մեր տանջանքները...



ՆԱՄԱԿ ՂԱՐԱՂԸԼ ԳԻՒՂԻՑ

Համիդէի զօրքերի վերագարձը Արծկէ գիւղը.


—Արծկէ գաւառի բոլոր հայաբնակ գիւղերը, որ Քլտան (Հայաստան) կըսուի, գրեթէ աւերակ են դարձել: Հայասրանցի Հրսէյին փաշան իւր Համիդէի զօրքերով վերջին տարիները այն չափ նեղեց Քլտան իր հարստահարութիւններով, որ Պէշնագոմեր, Նորչէն, Վեշկացուկ, Ծակծակ և այլ գիւղերը բոլորովին թողին իրանց աները, ցանած արտերը և գաղթեցին, ով որտեղ կարօտ էր...

Այս տարի Սասունի կոտորածէն վերագառնալիս Համիդէի զօրքերը սուլթանից շնորհակալութեան նամակ մը ստացան Հիւսէյին փաշայի հասցէով. նամակը կը վերջանայ, ինչպէս պատմեց մեզ այդ նամակը տեսած և լսած գեղեցիկիւնցի Ալի աղան, հետեւեալ խօսքերով. «Հանգչեցէք և համբերեցէք ու սպասեցէք բարի վարձատրութեան մը. պիտի ջանամ գործածել միջոցներ, որ օգնեն ձեր ամասթօշակները կանխիկ վճարելուն»... Առանց այն էլ Համիդէի զօրքը միշտ քաջալերութիւն էր գտնում սուլթանից, իսկ Սասունի կոտորածից յետոյ սուլթանի այդ նոր ենիչերիները վերջին ծայր երես առած, էլ ոչխար, եղ, կով, գոմէշ, էշ, ձի չթողին հայոց գիւղերում, որ չքաշեն, տանեն. էլ ցորենի, դարու և այլ հացաբոյսերի շտեմարաններ չմնաց, որ չթալանեն. էլ աղջիկ, կին չմնաց, որ առեանգելով չբռնաբարեն... Էլ ինչպէս դիմանան գիւղացիք. էլ ինչպէս չթողնեն տունը, տեղը, ցանած արտերը և չհեռանան, ամայի դարձնելով Հայաստանը...

Հիւսէյն փաշան իր 200 Համիդէի ձիաւոր զօրքերով մտաւ Արծկէ և ինչ սոսկալի եղեւնագործութիւններ մնաց, որ չանի... Գիւղում մի քանի վաճառականներ կային, լսելով Համիդէի դալը խեղճերը գոցել էին խանութները ենիչերիները բռնի կոտորեցին

խանութները և վերցրին, ով ինչքան ապրանք հարկաւոր էր համարում թէ իրան և թէ բարեկամների համար, հարկաւ առանց մի փարութձարելու... Ապա թալանեցին գիւղում աչքի ընկնող 4 հարուստ ընտանիքի աները, վերցնելով շատ թէ քիչ մեծ արժէք ունեցող իրեղէնները և փողը. իսկ յետոյ, յետոյ—Աստուած իմ—դժւար է նկարագրել մի առ մի մտնելով գիւղի բոլոր տները, որտեղ շատ թէ քիչ գեղեցկատեսիլ աղջիկ կամ կին կը գտնէին, իսկոյն կը բռնաբարէին... Շատ և շատ անգամ ենք ականատես եղել թրդերի և Համիդէի թալանուծներին, բարբարոսութիւններին, բայց այս անգաման նմանը չենք յիշում...

Հեռանալով Արծկէից, Համիդէի զօրքերը մտան Շափրամ գիւղը, ուր սպանեցին մի մարդ և հետները բռնեցին 30 եգ և 2 ձի: Այդքանը բաւական չէր. թալանեցին մի առ մի ճանապարհի վրայ գտնուած բոլոր գիւղերը. Ծողկէ գիւղի Պօղոս աղայի 300 ոչխարը յափշտակեցին: Միրխուսի, Մեծքա, Պոշխանայ և Տափաւանքի եղները և նախիրները տարին. թալանեցին Խուլիկ գիւղի գոնապանին և այլ երկու հայ պահապանների սպանելով... Չկայ մէկը, որ համարձակուի սուլթանի այդ նոր ենիչերիները բարբարոսութիւնների, դժոխային արարքների մասին գանգատ ներկայացնել և եթէ գանգատ տուող էլ լինի, ով պէտք է լսէ, դատաստան անէ,—իբր սուլթանը, թէ իր սրիկայ պաշտօնեաները...



ՆԱՄԱԿ ԵՐԻՉԱՅԻՑ

Հայոց ազգային պատրիարք հօր կողմից տեղիս առաջնորդական տեղապահ հօր կազդարարութի, որ քաղաքիս տեղեկագիրը խրկին: Տեղապահը կը փութայ, քաղաքական ժողովի հետ ի միասին, տեղեկագիր պատրաստել և կը խրկին ապրիլ ամսոյ մէջ. արդէն տեղեկագրի ամեն մի խնդրոյ մասին թագրերով կառավարութեան բողոքած է եղեր, սակայն կառավարութեան կողմից անլսելի է մնացած: Աերոյիշեալ տեղեկագիրը Պոլսոյ փոստային վարչութիւնը բռնելով՝ վար կը դնէ, առանց պատրիարքարան յանձնելու. անկից հոս եկած նամակներն ալ 3-4 շաբաթէ ի վեր է, որ կը պահուի և առաջնորդարանին չյանձնուի, այս շաբաթուն երկու նամակ կը յանձնին՝ բացած բոլորովին:

Պոլսից հեռագրով երկու անգամ փոխանորդ հօր մասին հարցում կընեն իդարէի մէճլիսին, թէ ինչ տեսակ մարդ է: Այս հարցումներ ընելուց յետոյ, դարձեալ տեղապահը և քաղաքական ժողովոյ անդամները խիստ հարցաքննութեան ենթարկեցան կառավարութեան կողմանէ Միւսանթիք էֆենտիի ձեռամբ: Հարցաքննութեան պատճառը առայժմ մեզ մոռ չէ. միայն թէ տեղեկագրի մասին եթէ հարցումներ ընին, չպէտք է պատասխանեն, լսելով թէ այդ խնդիրը պատրիարք հօր հարցուցէք, մեզ հարցնելու իրաւունք չունիք:

Թրքաց բարբարոսութիւնքը սկսան օրից օր աւելը նալ սրիկաներ շարունակ հայոց թաղերը կը շրջին խուճիկ խուճիկ և ամենաթեթեւ պատճառներով մեծ խորտուճներ հանելու կաշխատին: Անպատճառ մեծամեծ պաշտօնէից դրոշմովն է: Մարդասպանութիւնք, ծեծել, հայհոյել, ծանր վերաւորանքներ տալ առօրեայ դարձան: Հողագործի դրուձիւնը շատ անտանելի է, ինչու որ սրանից յետոյ պէտք է իւր արտը ջրէ, քաղէ, մի խօսքով՝ դաշտային այլ և այլ զբաղմունքներով պէտք է պարապի: Սրիկաներ կառավարութենէն զրգեալ արդէն կը սպասեն այս տեսակ դէպքերում մնասեք, ինչպէս անցեալ օր պատահաւ.— Փերդիկեան Աւետիսը գիշերով արտը ջրած ժամանակ տաճիկները լաւ կը ծեծեն, այնպէս որ խեղճը հազիւ հազ տուն կը հասնի լեզուն կապած՝ առանց մի բառ խօսելու: 2 օր յետոյ մեռաւ:

Եթէ մեր վիճակին հոգ մը չը տարւի, ահագին մեծ կորուստ մը մեզ կը սպաննայ: Բանտարկեալները դեռ բանտերու նեղ ու խոնաւ նկուղներու մէջ կը տանջւին: Նոր տուրքերը պայրամի աւթիւ շատ խիստ կերպիւ կը հաւաքին: Աճարելու անկարողները կը բանտարկւին՝ ծանր պատիժներ կրելով՝ գիւղերից քաղաք գալու համար, հայ գիւղացին մեծ նեղութիւն կը կրէ— շատ անգամներ կը կողոպտւի, գանգատներն ալ անյսելի կը մնան կառավարութեան կողմից: Հաղորդակցութիւնը արգելած է, գործերը դադարած, ժողովուրդը անօգնական և անկարեկից վիճակի մէջ է, օրերով դատարկ ման կուգան առանց իւր ընտանեաց օրապահիկը հայթայթել կարենալու:

Ղուրուջայի գայմագամը, որ տեղւոյս միւշիւր Զաքի փաշայի եղբայրն է, խեղճ Արմտանի ժողովուրդը բանտերու մէջ տանջել տալով՝ կեղեքում է: Այժմ էլ մի ուրիշ միջոցի է դիմել հայերից փող կորցելու համար, իւր մօտ մի ակնեցի սպասաւոր կը բռնէ և իբրև թէ նրանից մի բան իմացած, Ահնայ վաճառական ժամկոչեան եղբարց մի նամակ կը գրէ սոյն պարունակութեամբ. «Թէ ես ձեր ինչ գործի ծառայիլը և ինչ խորհուրդներ ունենալը իմանալով, կուզիմ, որ կառավարութեան իմաց տամ զձեզ բանտարկին և այլն, իսկ եթէ այդ նեղութիւնը կրել չէք ուզեր, պէտք է ինձ վճարէք 200 հատ օսմ լիբա, որ չիմացնեմ»: Այդ խնդրի վերայ ժամկոչեանները Խարբերթ կը գնան բողբ, տալու կառավարութեան, նոյնպէս և Կարին տեղեկութիւն կուտան. Կարինից կանչում են գայմագամին և ահա գայմագամը եկած է Երզնկա՝ Կարին դնալու համար:

Արաբկերու հայոց եկեղեցին և բողբեականների ժողովարանը շան գլուխը և դիակը ձգողները եղեր են գայմագամ և իւր կուսակիցները, որոնց խորհուրդ է տալիս և խրախուսում է նոյն ինքն բարձր կառավարութիւնը:

—Տեղապահ հօր և Բաղաբական ժողովոյ ճէշա տայինէսին կանչելուն պատճառն ալ իմացանք նամակս ուղարկելու ատեն.— Կարմրի խենթ Նիկողոս յայտնութիւններն են: Նիկոն յայտնի խենթ մը էր թէև, բայց անցեալ աշնան իբր կասկածելի Գարահիսարի մօտերը

կը ձերբակալուի և կը բանտարկուի. վերջերս փոխադրուած է տեղւոյս բանտը. իր հարցաքննութեան միջոցին ըսած կըլլայ թէ: «Ես ս ա յ ի (սուրհանդակ) եմ, և ազգային յեղափոխականներու կողմէն նամակ կը տանեմ ու կը բերեմ»: Այս խոստովանութիւնը, իբր ստոյգ լուր, իբր փաստ ընդունելով, այսօր կրկին հարցաքննեցին մեր փոխանորդն ու ժողովականները:

Կառավարութիւնը իւր ծիծաղելի վարմունքով աւելի ամրապնդեց, որ ինքը կասկածելի դիտումներ ունի յիմարի մը խօսքին մեծ կարևորութիւն մը տալով: Մեր վարչականները ազատ շունչ մը քաշեցին, երբ իմացան թէ Նիկոյի խօսքովը կանչած են. 3 ժամէն աւելի, հարցաքննեցան ու ազատ թողեցան: Ողորմելի կառավարութիւն, խենթ մը յայտնի ամբողջ քաղաքին, 8 ամիսէ ի վեր իբր քաղաքական յանցաւոր բանտարկելով չգոհանալէն զատ, ելեր նորա խօսքերը իբր փաստ ծառայեցնելու կը ձգնի. յիմար:

Ն Ա Մ Ա Կ Օ Ր Դ Ի Ի Յ

Հոս ընդամենը 4 ոստիկան կայ, որոնք ամբողջ գիշերը, մինչև լոյս հայոց թաղերը կը պտտեն: Այդ ոստիկանները արդէն յունաց թաղը անբարոյականութեան բոյն դարձուցած ըլլալով, ուր չկայ սոյն աղջիկ մը, որ իր կուսութիւնը զոհած չըլլայ այդ սրիկայ թուրք պաշտօնեաներու գարշելի կիրքը յագեցնելու համար, կը մնածեն հայ թաղերն ալ անբարոյականութեան վայր մը դարձնել, և ահա ատոնցմէն ոստիկան Միրաճ պէյը, իր չար կամքը հայ օրիորդներու և որբ կիներու վրայ գործադրելու համար, պատրակ մը կը փնտրէ այդ դիտաւորութեան իրականացման հասնելու, որին արգելք կըլլար գիշերապահ Յակոբ: Միրաճ պէյը միջոց մը կը փնտրէր ոչնչացնել անիկա և ահա յուրիս ամսւայ 21-ին, ուրբաթ երեկոյ, ժողովուրդը դեռ չննջած, կուզէ խաղ մը խաղալ, ուստի այդ նպատակաւ կը բռնէ գիշերապահ Յակոբը և կսկսի քաշել դէպի բանտ, մեղադրելով՝ որ հայերը ընկերութիւններ կը նեն և իրեն լուր չի տար: Յակոբ կընդիմադրէ: Այս յանդգնութիւնը ոստիկանին զայրոյթ ազդելով, զինւորներով պաշարել կուտայ թաղը և կը բռնէ Յակոբը, քաշելով ու քաշկուտելով, կը տանեն դէպի բանտ, սակայն կէս ժամ սպասելէ վերջը, բանտապահ Տուրմուշ չավուշ կըսէ. «Դ՞նա պաշտօնիդ գլուխը, չըլլայ որ փոթորիկ մը ելլէ թաղին մէջ», որովհետև ոստիկաններուն ըրած անբարոյականութիւնը շատցած է գըլխուն: Յակոբ երկրորդ օր բողբ կուտայ կառավարութեան, անյսելի կը մնայ ձայնը: Կառավարութիւնը ինչու պատժէ ոստիկանը, որը իրեն արժանի պաշտօնեայ մ'է:

Օրդւեցիք թող գիտնան պաշտպանել իրենց աղջիկներու ու կիներու պատիւը սրիկաներու դէմ:

Հ Ա Յ Ա Ղ Ձ Ի Կ Ը

(Ն Ա Մ Ա Կ Խ Ն Ո Ղ Մ Ս Ի Յ)

Երեկ երեկոյ մինչ ժան կուգայի Արգալ Ալիի թաւ ծառերու մէջ, յանկարծ տեսայ մի դժգոյն, նիհար, ու ժասպառ հայ աղջիկ, որ նւազած և կիսամեռ ընկել էր ծառերու արմտի քով. մտեցայ նորան. սարսափելով աղաղակեց. գգւեցի, շոյեցի, փայփայեցի. աչքերը բանալով նայեցաւ ինձի. «Պուտ մի ջուր», աղաղակեց. խնդիրը կատարեցի:

— Ինչո՞ւ, խեղճ աղջիկ, էս անտառի մէջն էս եկել, ինչ ցաւ ունիս. պատմէ՛ ինձ:

— Աղբէր ջան, զե՞նչ կը հարցուս, թո՞ղ, թո՞ղ, որ էս մեռնիմ և պրծնիմ անօրէնի դարդ ու խասափաթից: Ասուած մըր աստղը սև է դրել երկնքի մէջ. սև գըրչով է գրել մըր ճակտի գիրը, մէկ խղճուկ հոգի է տուել, էն էլ չի առնել, որ պրծնիմք:

— Քուրիկ, ինչ որնիս. պատմէ՛, պատմէ՛ ինձի, որ տեղից ես, և ինչո՞ւ այստեղ:

— Ես Խորթուհու Հինոց գիւղիցն եմ, իմ աղբեր Մկրտն հինգ տարի առաջ շքրանցի քրդեր, Մագսուտի Խալլօն բռնի քրդացուցին: Էս տարի աղբերս եկաւ գեղ, կանչեց գեղացիք, լայով ու պաղատանքով խնդրեց, որ զինք ազատեն էն դազաններու ձեռքէն, տաննն ի Ռուսէթ, որ լոյս հաւատին դառնայ նորէն: Գեղացիք գողտուկ ձամբու դրին. երեք օր յետոյ մագսուտնին իմացան, չորս թարաֆէն թրով ու թֆէնքով հասան մըր գեղի վրէն. գեղացիք ցիւցցին (փախան) իրարուց, ես լէ իմ մէկ աղբօր հետ փախայ գեղէն. գինեք թէ էն անօրէնները ինչ պատիժ պիտի բերէին մըր գլխին. դեռ Ալէքսօրի դարան վրէն չընք հասի, երբ տեսանք մըր գեղի ծուխն ու մուխը, որ կծառներ դէպի երկինք. լացինք, ողբացինք, ինչ չարա (ճար). եկանք Խաթայի աղայի գեղ. գիշեր գիմ աղբէր գողտուկ կորցուցին. երբ իմացայ, հարցուցի, ձէն տող չեղաւ. Խաթայի տղէն Տաճար զիս պահեց իր տան մէջ երկու շաբաթ: Աղբէր, քինէ պահեմ, Աստուծա՛ ինչ պահեմ, իմ խերաթիս (պատիւ) լէ ընցաւ: Փախայ, հրաշքով պրծայ, ընկայ էս մութ մէշէն. Ասուած քեզի ձամբեց, ամա՛, էլ հոնկցա, վերջ ինչ պրտի էնեմ զպարել:

Եւ արտասուահեղճ հեկեկում էր, և նրա արիւն արցունքը խառնվում էր գարնան հորդահոս պղտոր ջրերում:

Այս ընդհանուր տխուր, անտանելի վիճակն է, որ կը տիրէ ամբողջ Քրդա-Հայաստանում. ամեն օր նոյն երեւոյթ, ամեն օր նոյն դազանաբարոյ շարճարանք. և մենք այս յուսահատ ժողովուրդեան հետ յուսահատած կաղաղակենք դառնահեղճ սրտով: «Ո՛ր էք, եղբարք»:

Եւ մեզ համար «Երկինքը շատ բարձր է, իսկ քրիստոնեայ Եւրոպան շատ հեռի»... իսկ Ի՞նչը...

Մեզ հասած տեղեկութիւններից երեւում է, որ Սասունի ԱՊՍՍԱՄԲՈՒԹԵԱՆ և ԿՈՏՈՐԱՆԻ տարեգարձը օգուտտուի 13-ին շատ տեղեր են տօնել—Թիւրքիայում, Անգլիայում, Ռուսաստանում և այլն: Այդ տեղեկութիւնները իրաւունք են տալիս յուսալու, որ օգոստոսի 13-ին վիճակած է լինել մեր ժողովրդական նշանաւոր տօներից մինը, որով և մեր յիշողութեան մէջ միշտ կենդանի կը մնան քաջերի կռիւը և անամօթ թշնամու տմարդի կոտորածը. սա անհրաժեշտ է:

ՆՆՈՒՐԱՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅՈՒՑԱԿԸ

Վիշապ քաղաքի կեդրոն. անդուկի մէջ ստացւեցան. Արսէնեան 100 դահեկան, Միսակ 49 դահ, Դաւուրիկ 40 դահ, Սասուն 65 դահ, Ժայռ 45 դահ, Հրահատ 40 դահ, Մամիկոնեան 30 դահ, Խենթ 20 դահ, Պիծակ 60 դահ. ևս 20 դահ. (Ա. Բ.). ևս 40 դահ. (Մ.), Կ. Թ. 10 դահ, Սուսեր 60 դահ, Մրդին 20 դահ, Ս. Թ. 20 դահ, Կայծակ 15 դահ, Փարես 10 դահ, Վառօր 105 դահ, Սև-Կարմիր 85 դահ, Մ. Գ. 20 դահ, Բառօ 10 դահ, Հրազէն 160 դահ, Թաթուլ 70 դահ, Արծիկ 40 դահ, Վ. Մարզպան 10 դահ, Ա. Ծ. 10 դահ, Խ. Մ. 10 դահ, Զիմօր 10 դահ, Գ. ի ձեռքով 10 դահ, Գուռգ 30 դահ, Ալէքսանդր 10 դահ, Փոթորիկ 50 դահ, Սուրհանդակ 47 դահ, Անձնէր 100 դահ, Պարոյր 60 դահ, Վահագն 70 դահ, Կաղ 20 դահ, Կօշ 10 դահ, Լիպերթ 10 դահ, Գրիչ 20 դահ, Բաշ 20 դահ, Գյուլի 20 դահ, Ալէք 20 դահ, Աստղ 20 դահ, Ս. Պ. 20 դահ, Ա. Ն. 20 դահ, Մ. Կ. ձ. 20 դահ, Միհրան 20 դահ, Կազին 100 դահ, Տակառ 20 դահ, Արծրունի 142 դահ, Կարիճ 60 դահ, Արարատ 45 դահ, Եղբայր 20 դահ, Բանալի 20 դահ, Օր. Արաքսի 20 դահ, Օր. Արշակունի 10 դահ, Մանուշակ 10 դահ, Օր. Հայրենասէր 20 դահ, Պատրաստ 25 դահ:

Քարաշէն գիւղէն 164 դահեկան:
Զմեռ քաղաքէն. Օձ. 101 դահ, Ըանթ 45 դահ, Թընդանօթ 28 դահ, Վառօր 17 դահ:
Շվ. Թ. ք. ից՝ Ա. 30 Ֆր.
Տր. կօմ. գանձարանում՝ Փայլակից 10 լիրա:

Դաւաճան Մամբրէի հինգամեայ զլուլի գործունէութեան վերաբերեալ տեղեկագիրը, որոնց մասին ակնարկած է վերեւ. «Դաւաճան Մամբրէ կարգալոյծ վարդապետի դատապարտութեան տեղեկագիր» յօդածի մէջ, մենք կը զեպեղենք «Իրօչակ»-ի հետեւեալ համարումս:


Մամուլի տակ են և շուտով լոյս կը տեսնեն հետեւեալ գրքայինքը.

«ՍՕՏԻԱԼԻԶՄ, ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ և ՄԻԶԱԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ» Դաբրիէ Դըվիլի,
«ՆՈԶՂԱՏԻ ՎԵՐՁԻՆ ԴԷՊՔԵՐԸ»:

Դաշնակցութեան անձամօթներից խնդրում է թղթակցութեան ներքատուութեան համար դիմել.
L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.
Վիլննա, Դաշնակցութեան ազատ սպարաղ

Վ. Մայի

ԴՐՈՇՆԿ



« ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ » ՕՐԳԱՆ

ԵՐԶԵԿԱՅ ՏԱԳՆԱՊԻ ՄԷՂ

ԿՈՒՒ ԱՄՊԱՏԱԿ ԽՄԲԻ. ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽԺԴԺՈՒԹԵԱՆՑ. ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ. ՄԱՏՆԻՉ ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻԻ ԶԱՐԿՈՒՄԸ.

Հայ հայդուկ-խմբի մի մասը վեց օր շարունակ կը պաշարւի երկք վաշտ զօրքէ, որ թնդանօթ իսկ տարած էր իւր հետ: Վերջապէս օգոստ. 6-ին, կիւրակէ առաւօտ ժամը 9-ին, սոսկալի հրացանաձգութիւն մը կսկսի երկու կողմէն: Հայդուկաց թիւը անհամեմատ նւազ էր՝ հազիւ 17 հօգի և դիրքերնին անյարմար, սակայն կոխը հերոսական կը լայ—ամբողջ 3 ժամ: Հայդուկներէն երկուսը վիրաւոր կիյնան, երեքն ող կը կաշանաւորին, իսկ միւսները ձեզքելով ահագին թշնամեաց բանակը կը յաջողին փախուստ տալ:

Զօրքերու կողմէն ողջան կորուստ կայ, յարմարի չէ: Հայդուկ-խմբի հանդիպումը առիթ մը կարծես եղաւ մեր արիւնհարքու կառավարութեան, որ ալ սկսաւ կեղեքումները, բռնաբարութիւնները, աւրշուկը, թաշանը աւելի ընդարձակ սահմանի մէջ դարձել. միայն 1000-1500 հետեակ ու հեծեալ զօրք անդադար կը կողոպտէ, կը լլկէ, կը ծեծէ և կը մեռցնէ: Նոյն չափ ալ բաշխօզուկ թուրքեր ու քուրդեր սուլթանի կառավարութեան հրամանով՝ կամրողացնեն, կը գերազանցեն կանոնաւոր զօրքի կատարած անհամար գաղափարութիւնները: Կամախի Թաշիր փաշան հարիւրաւոր բաշխօզուկներով, Կէճանիսի Կոճուռ. օղլի Համիտ պէյ նոյնպէս իր կողմի 150 բաշխօզուկներով և մինչև իսկ Սեբաստիոյ կողմէն անթիւ չէրքէզներ՝ իմանալով յայտնի համարձակ կատարւած աւարառութիւնները՝ սկսած են Երզնկայ վազել, իրենց գազանական պահանջներին, իրենց անամահան կրքերին յագուրդ տալու համար...

վերջապէս ամեն ձեռքը հասնողը սկսաւ մէկ-մէկ բան փետտել խեղճ հայէն:

Կառավարութիւն մէկ կողմէն բան գործ ըրած է հայ վանքերու, հայ դիւղերու աւերումն ու թալանումը, միւս կողմէն ալ իւր շահատակութեանց ապացոյց գտնելու մտածումով, սկսած է հետզհետէ յիմար, աննպատակ ձերբակալութիւններ ընել: Արմենակ Հայկունիի և իր նման վատերու մատնութիւնները, զրպարտութիւնները առատ նիւթ եղան աստիկանութեան և ամսուս 13—14-ին քաղաքիս մէջ բազմաթիւ ձերբակալութիւններ տեղի ունեցան: Բանտարկեցան շատ մը պատուաւոր անձնաւորութիւնք, որոց թիւը 30-ի կը հասնի առ այժմ: Հանդիպողին աստիկանատուն կը բշեն և հարցաքննեն.

—Այս գործի վարչներէն էք.

—Դրամ ու զէնք դուք տւած էք էրմէնի դահրիմաններուն (հայ հերոս).

—Այս գործը պատրիարքի հրամանովը կընէք.

—Պատրիարքին հետ կը թղթակցիք. և այլն, և այլն:

Այս կարգի հարցումներ կընեն և երբ փոխարէն բացասական պատասխաններ կը ստանան, կը նետեն զանոնք բանտին խորը՝ թէրսխանէն, ուր քսամեղի չարչարանքներ կապասեն անմեղներուն:

Օրէ օր նոր ձերբակալութիւններ տեղի կուենան:

Սեպտ. 5 ա. Լուսաւորչի վանքի վանապետուհի (գուստըր վանահայր և առաջնորդ տ. Վարդան վարդապետի) Մայր Մարթայի վրայ թէև նաւթով այրելու սպառնալիքը ի գործ չդրին, բայց անոր տւած չարչարանքնին չափ ու սահման չունի. վերջի օրերս ձիււոր զօրականներով քաղաք բերին և բանտարկեցին զայն իսկ իւր հարսը անչափահաս տղոցմով լեռները տարին... Մարթայի մէկ որդին հիւանդ վիճակի մէջ վանքը կը մնայ՝ հիւանդապահ ունենալով մարդախողովող զինուորներն:

Դեռ որոշ տեղեկութիւններ կը պակասին մեր ընդհանուր վիճակի մասին. թուրք խուժանը և ամբողջ Գ. զօրաբանակն նշանի կապասեն հայերու վրայ յարձակելու, ջարդելու, կոտորելու, գրգռումը հետզհետէ կը

սաստկանայ, և գոնէ այսօր, վաղը Երզնկան չկայ:

Վատահոգակ Արմենակ Հայկունին բնիկ Երզնկացի է. 90 թ. յեղափոխական և ապա Կ. Պոլիս նազում փաշայի գլխաւոր գործիքներէն մինը ըլլալով՝ անհամար մատնութիւններ ըրաւ և շատ մը բանտարկութեանց պատճառ եղաւ: Այդ նախկին յեղափոխանը, մի քանի տարիէ ի վեր Երզնկայ կը բնակէր, առանց որոշ գիրք մը բռնելու: Այս վերջին դէպքերուն առթիւ իւր գըլուխը դուրս հանեց և սկսաւ բողբոջին յայտնի համարձակ մատնութիւններ ընել և աջակից դառնալ ոստիկանութեան: Գարշելին իր ընկերները՝ Մամբրէն, Թիւթինձիէվը չլիշեց երբէք:

Օգոստոս 17-ին, երեկոյեան ժամը 11-ին, շուկայէն տուն վերադարձած պահուն, Սիւրմէնենց փողոցի մէջ, յանկարծ ռեվոլվերի պայթիւն մը լսեցաւ և յեղափոխական վարձատրիչ գնդակ մը եկաւ Հայկունիի ձախ կողմ խրեցաւ կռնակէն: Մատնիչը երեք անգամ իր վրայ դառնալով՝ ինկաւ գետին, անիմաստ գոչիւններ արձակելով. քիչ յետոյ ինկած տեղէն ելնելով, մտաւ Լազեանի տունը՝ յ՛ջ, զարնւեցայ՝ ոռնալով, անկէ ալ դուրս ելաւ և յօգնութիւնս՝ պօռաց ու ինկաւ վար. վերջապէս տուն փոխադրեցին: Քօմիսէր, բժիշկ և այլն կը հասնին և ժամ մը վերջ գնդակը կը հանեն թէև, բայց ծանր է վիճակը:

Քօմիսէրը գիրկը առած մատնիչին կըսէ եղբր. «Արմենակ, օղլուս, պու իշ պէնիմ իւզիմտէն օլտու սանա. զարար եօք, մէրադ իթմէ» (Արմենակ, զաւակս, այս գործը իմ պատճառաւ եղաւ քեզ, վնաս չունի, մի՛ մաշէիր): Ի՛նչ սրտառուչ դամբանական աշխատաւոր մատնիչի մը. իսկ գնդակահար Հայկունին կը գոչէր հայերուն. «Ես ի՞նչ ըրի, ես որո՞ւ ինչ եմ ըրեր, որ ասանկ ըրին»:

Լիբրը մահաւան դուռն իսկ կուզէ ստել, կեղծել, կարեկցութիւն շահել, յի՞նչ եմ ըրեր՝ յայտարարելով:

Ո՛չ ստորաքարը արարածներ, վատեր, դաւաճաններ. այդ ողորմելի հնարքներն հնացան. ո՛ր որ երթաք, որչափ կեղծէք, որքան տարիներ անցնին, ձեր դատավճիռը կտրւած է: Գաւաճանը չպիտի ապրի, մահ մատնիչին:

Թ Ա Մ Ձ Ա Ր Ա Յ Ի Կ Ռ Ի Ի Ը

Շապին-Գարահիսարէն մէկ ժամ հեռի Թամզարայ աւանին մէջ, ամսոյս սկիզբները օր մը, թուրք սրիկայ մը, պրի հայ կնոջ մը դուռը զարնելով, օղի կուզէ անկէ:

Խեղճ կինը չունենալուն համար կաղաչէ անոր, որ բարեհաճի ուրիշ անէ մը առնուլ. թուրքը, որ կաղ մ'է, կսկսի անլուր հայհոյանքներ տեղալ կնոջ գլխուն և մինչև իսկ ծեծելու նպատակաւ շարժումներ ընել: Այդ պահուն անկէ անցնող Գրգըթսէլեան Մովսէսը որ ծանօթ է այդ թուրքին, մի քանի յանդիմանական խօսքերով կըսէ անոր, որ անամօթութիւն չընէ, այլ երթայ ուրիշ ունեցողէ մը առնուլ օղին: «Կեա՛վուրնե՛ր, տակաւին շատ պիտի խօսի՞ք, և ձեռքի գաւազանով կսկսի հարւածել: Այն վարկեանին խուռն բազմութիւն մը կը հասնի՝ ամենն ալ թուրք և կսկսի օգնել կաղ թուրքին. բաղմաթիւ հայեր ալ կը ժողվին, բայց փոխանակ կուտըլու, կաշխատին համոզելով յետ քաշել թուրքերին: Թուրքերը, որ կանխամտածութեամբ այդ կողմ յառաջ քշած են եղբր և իրենք ալ պատրաստած հայերին լաւ դաս մը տալ, փոխանակ անոնց աղաչանաց մտիկ ընելու, անոնց վրայ կը յարձակին: Այդ պահուն մի քանի կապոց խոշոր ցուպեր կը հասցունեն կուռն վայրը, որք յառաջուց պատրաստած են եղեր. ամեն թուրք մէկ մէկ ցուպ առած ձեռքը՝ անգէն հայերին սոսկալի ծեծ մը կը քաշեն, որ կը տեւեւ ամբողջ երկու ժամ. այնտեղ գտնուող թուրք պայտատ մը իւր խանութէն մուրձ և ազցան դուրս կը նետէ ըսելով՝ թէ ահաւասիկ ձեզի գէնք, կեա՛վուրներին գըլուխը ջախջախեցէք: Իսկ թուրք մեծերը միշտ կը խրախուսեն խուժանը:

Մի կողմից կուրը կը շարունակուի, միւս կողմանէ մի քանի թուրք կը հասնեն և միւթէսարիֆ Մուսթաֆա պէյին ներկայանալով, կսեն թէ կեա՛վուրները մեզ ջարդեն կոր: Մուսթաֆա պէյ, որ կանխաւ հրապարակաւ պոռացել էր՝ թէ «Խամիմի ինսանլըգ տէֆտէրինտէն սիլսինլէր էկէր պու մայէ.քէթի ալթիւսթ եաբմատան պուլնտան կէտէրսէմ» — անունս մարդկութեան տոմարէն թող սրբեն, եթէ այս քաղաքը տակն ու վերայ չըրած, ասկէ մեկնիմ. — անմիջապէս Թապուր աղասիին կը հրամայէ երթալ Թամզարայ և Սասունէ մնացորդ կեա՛վուրները բնաջինջ ընել ու դառնալ: Ոստիկանապետը կը մերժէ այդ հրամանը և կսէ, որ ինքը միայն կուրը դարբեցնելով, յանցաւորները բռնել բերելու իրաւունքն ունի, և կը մեկնի խուժը մը ոստիկաններով:

Ծխախոտի գօլձի պաշի Բէճա դազանը, որ քաղաքի հայոց վրայ մեծ ազդեցութիւն ունի և որ իւր շահատակութեամբքը սոսկացուցած է ամենուն, աւելի կանուխ իմանալով կուրը, ձի հեծնելով կերթայ Աութմուշ ըսած թուրք պագինները և անկէ 10-15 սրիկաներ հետը առնելով՝ Թամզարայ կերթայ հայերին ջարդելու, բայց երբ հոն հասնելով, ոստիկանապետը կը

տեսնայ՝ առանց մէջադէպի կը թողու, կը փակուի:

Աւթ տասը հայ, նոյն չափ ալ թուրք կը բանտարկէին: Քաղաքի ժողովուրդը այս դէպքէն յուզեալ՝ ամբողջ հայ խանութներ և եկեղեցիները կը փակեն, կը փակեն նոյնպէս Թամզարայի, Անդրկասս գիւղաքաղաքի և Ածպտեր գիւղի հայ խանութները: Թամզարայի ժողովուրդէն 150-ի չափ ընտանիք քաղաքի դերեզմանատան մէջ վրանաբնակ են այդ օրէն ի վեր: Եթ-ու-թ ծանր վիրաւորներ, որոնց մները ապցանով պատառուտած են՝ քաղաքի ս. Փրկչեան վարժարանին մէջ կը դարմանուին, իսկ ցուպերով վիրաւորածները թիւ չունին: Ժողովուրդին այս միաձայնութեան վրայ քաղաքապետը խոհեմութիւն կը համարի այդ առթիւ բանդարկուած հայերին ազատ արձակել՝ յուսալով թէ գուցէ հայերը խաղաղութիւնը վերահաստատեն, բայց հայեր հաստատ կեցած իրանց որոշման վերայ, թէ Սեբաստիոյ վալիէն և թէ նոյն տեղւոյն առաջնորդ Պետրոս եպիսկոպոսէն եկած հրամանաց վճռողականապէս պատասխանած են՝ թէ իրենք կուզեն պաշտօնական դատավարութիւն քաղաքապետին և անոր արբանեակներու գործոց մասին, թէ կուզեն զօրաւոր երաշխաւորութիւն մը իրենց անձին և ստացածոց ապահովութեան. քանի որ առնք չը կան, ամեն ինչ միւթէսարիֆին կը վայէ, ըսած են: Քաղաքապետը աւելի շահելու համար հայոց սիրտը գոլձի պաշի Քէհան իւր մի քանի ընկերներով բանդարկած է (՞):

Մինչ այս թուական այդ դրութեան մէջ է Շապին-Գարահիսար. միայն եկեղեցիները բացած են. առ պատրիարքարան յղած հեռագիրները անյայտ եղած են. յայտնի չէ թէ այնտեղի հեռագրատունը, թէ Վ. Պոլսոյ պաշտօնատները կը շրջին տակաւին. սա միայն ճիշտ է թէ պատրիարքարանը հեռագիր չէ ստացած:

Գիշեր ցերեկ վարկեան առ վարկեան մեծ ընդհարման մը ահը կը տիրէ ժողովուրդեան վրայ. թուրք սրիկաներ սրձարանները լցած են. հայ ու թուրք իրարու կը նայեն կատրած աչքերով: Ասի թէ Սեբաստիայէն քննիչ եկեր է Գարահիսար:

Վերջին լուր Թամզարայից:—

(Երկրորդական աղբիւրից ստացած լինելով այս լուրը, հրատարակում ենք վերապահութեամբ.)

Շապին-Գարահիսարի մութէսարիֆը և զատըն Թամզարայ կուզեն երթալ թամզարացիները ստիպելու, որ երթան տուններին: Բայց Թամզարայ չմտած հայերէ յարձակում կրելով՝ երկուսն ալ կապանին: Հետեանքը յայտնի չէ. մանրամասնութիւնք կը պակսին:

Բ Է Յ Յ Օ Ր Մ Ն Ե Ր Ը

V

Տաճկահայաստանը վարչական տեսակէտով բաժանուում է վիլայէտների (նահանգների), որոնց կառավարիչներն են սուլթանից նշանակուած և անունները կիսապաշտօնապէս եւրոպական պետութիւններին յայտնուած վալիները, վիլայէտը սանջակների (գաւառների)-կառավարիչներն են սուլթանից նշանակուած մութէսարիֆներ. սանջակները՝ կազանների (գաւառակների)—կառավարիչներն են՝ վալիի կողմից առաջարկած և սուլթանի կողմից հաստատուած՝ գայմադամներ. իսկ կազանները՝ նահիանների (մի քանի համայնքների կամ գիւղերի միութիւն, որոնք նահիա կազմելու համար պիտի ունենան 2000-10,000 բնակիչ. 1000 բնակիչ ունեցող համայնքն էլ կարող է կազմել առանձին նահիա, եթէ միջոց ունի վարչական ծախսերը հոգալու)—կառավարիչն է՝ խորհուրդի կողմից ընտրած և վալիի կողմից հաստատուած՝ միւրիըր. իսկ խորհուրդը ընտրուում է ազգաբնակչութիւնից. նրա անդամների թիւն է 4-8. —միակ համակրելի կէտը, որ գոյութիւն ունի Ծրագրի մէջ, նա էլ խեղճ է. դիպլոմատիան հաւատարիմ ձևով իր սկզբունքին, անհրաժեշտ է համարել, որ միւրիըր (որին ընտրում է ոչ թէ ուղղակի ժողովուրդը, այլ նրա ընտրեալները իրենց միջոց), անպատճառ վալիից հաստատի, որպէս զի այդ ընտրութիւնը «օրինական» ձև ստանայ, որով և նա՝ դիպլոմատիան պահպանել է սուլթանի գերիշխանութիւնը:

Գիւլլոմատիայի ամենանշանաւոր և նուրբ մանեօվըր այստեղ է. այս կէտում նա իսկապէս իւր ամբողջ հասակով ի ցոյց է դրած, որովհետև այս խաղով ճարպիկ կերպով կարելի է ժողովուրդի աչքին քող քաշել՝ կարծել տալու, թէ ինքը մասնակցութիւն ունի վարչական գործերում, հետեւապէս և իւր շահերը վտանգի չեն կարող ենթարկել: Եւ այս նուրբ ճարպիկ մանեօվըր կատարեալ անելու համար, կառավարիչների մօտ ստեղծուած են զանազան «խորհուրդներ», որոնց անդամների թիւր 4—8-ն է և որոնք կազմուում են հետեւեալ կերպով.—նահիայի խորհուրդները ընտրում են կազանների խորհուրդը, կազանների խորհուրդները սանջակների, սանջակներինը վիլայէտի:

Ինչպէս տեսնում էք, քանի բարձրանում ենք, այնքան «զուտում» է, այնքան ժողովուրդը հեռացնուում է անմիջական մասնակցութիւնից վարչական գործերում. մասնակցողները լինում են ընտրեալները

ընտրեալները և այն էլ մի քանի աստիճաններով: Դիպլոմատիան, ինչպէս ասել ենք, պետք էր պաշտպանէր սուլթանի կառավարութեան իշխանութիւնը և հայ ժողովրդի աչքերին թող փչելով, հայկական յեղափոխական շարժման առաջն առնէր, և ահա այդ թողութեամբ ընդունել է «ժողովրդի մասնակցութիւնը» վարչական գործերում, բայց այն ձևն է աւել որ անվաստ է մնացել կառավարութեան իրաւունքների ամբողջութիւնը, իսկ ժողովրդի մասնակցութիւնը մաղերով՝ հասցրել է այն աստիճանին, որ այլ ևս թեփ չէ մնացել. նրա իրաւունքների շւաքը իսկ չէ երևում: Մինչդեռ, եթէ խնդրի վրայ նայում էք թուրքի, անցողաբար, ձեզ թւում է, թէ ժողովրդի իրաւունքները որոշ չափով յարգած են և արած է աւելին, քան թէ կարելի էր սպասել դիպլոմատիայից, որ ժողովուրդը մասնակցում է վարչական խնդիրներում իր ներկայացուցիչների միջոցով, ասել է թէ՛ բաւականութիւն է տւած և՛ դժգոհ տարրին: Բայց երբ ձեռք էք առնում անդամահատի դանակը և սկսում էք քրննել լրջութեամբ ու անդամահատելու դուք գտնում էք, թէ դա մի մաշկ է ծածկելու վիժածը, ժողովուրդը իսկ պէտք ոչ մի իրաւունք չի վայելում, այլ որ նա ենթարկւած է լինելու սուլթանից նշանակւած պաշտօնեաների կամայականութեան, քմահաճոյքին: Սրանում համոզելու համար, հարկաւոր է վերցնել միայն այն, որ ընտրութիւնները ղեկավարելու են սուլթանի պաշտօնեաները մի կողմը թողնելով՝ որ արդէն հենց սաղմում, հենց աւալին քայլում ժողովրդի մասնակցութիւնը սահմանափակւած, խեղած է ու հեռացրուած աւելի բարձր խորհուրդների անմիջական ընտրութիւնից: Պարզ է, թէ ինչքան տեղի կունենան այդ ընտրութեան ժամանակ, ինչ տեսակ ընտրութիւն կը լինի և ո՞վքեր կընտրին. և մէք զայն ենք այն եզրակացութեան, որ իսկպէս ժողովրդի իրաւունքը կորցում, կեղեքում է. ժողովրդի իրական պահանջին համապատասխանող միակ կէտն է այս և այն էլ պլաստիկ, սուլթանական հագուստ են հագցրել ինչ պիտի սպասէ ժողովուրդը...

Բայց մի վայրկեան ընդունենք հակառակը և ասենք, թէ մենք սխալուում ենք, կօրանում ենք մեզ «զեկավարող գաղափարով», թէ ժողովրդի ձայնը գրահան կշիռ ունի և նրա «անմիջական» ու «միջական» ընտրեալները որոշ դեր ունին, և մինչև իսկ այդ խորհուրդները մի-մի կօնտրօններ, վերահսկողներ են սուլթանի պաշտօնեաների վրայ: Ըստ լատ

Սլոմ, եթէ պաշտօնեաներից մեկը սխալմամբ, պարտիութիւն է գործում և շարունակում է, կամ թէ

չէ, նրա ու խորհրդի մէջ ծագում է անհամաձայնութիւն և իւրաքանչիւրը իրենն է առաջ տանում, ինչ հետևանք կարող է ունենալ: Այն, որ գործին կը միջամտի մի այլ վարչութիւն, որովհետև, ըստ Ծրագրի, կան աւելի բարձր վարչութիւններ, որոնք գտնուում են բուն երկրից դուրս, այն քաղաքում, ուր և գտնուում է ինքը սուլթանը: Ծածկահայաստանի վարչութիւնը ենթարկւում է դրանց և այդտեղ այլ ևս գոյութիւն չունի ոչ մի խորհուրդ: Որքան էլ ցանկանալու լինէք ենթադրութիւններ անել ժողովրդի իրաւունքի և մասնակցութեան թելը երկարացնելու, ոչ մի հնարաւորութիւն չկայ. ինչպէս որ մայրաքաղաքն է հեռու բուն երկրից, նոյնպէս էլ ժողովուրդը այդ վարչութիւններից և դուք՝ ուղենաք չուղենաք, պետք է պարզապէս ասէք — որ ժողովուրդը ենթարկւում է այս վարչութիւններին և նրա ձայնը սրանց առջև հասնում է մինուտ զէնօյի: Նա, ժողովուրդը պարտաւոր է միայն հնազանդել և ուշադիր լինել կատարելու, ինչ որ իրեն հրամայում են:

Եւ որպէս զի մի թեթեւ ամբողջութիւն կազմեն մեր ներկայացրած կէտերը, երկու խօսք էլ ասենք այդ բարձր վարչութիւնների մասին:

Առաջի վարչութիւնը մի նոր մարմին է, որ իւր վրայ կրում է «Վերահսկող մայրու կօմիտէ» անունը, որի պաշտօնը կայանում է միայն կօնտրօլ անելու, փաստերի, իրողութիւնների վրայ մատնացոյց անելու մէջ (թէ ինչ ձևով կը կատարւի, այդ էլ ենք թողնում յայտնի է). նա ոչ մի վճիռ տալու իրաւունք չունի, այս վերջին կետը բացառապէս վերապահւած է Բարձր Դրան կամ մի և նոյն է ասել սուլթանին, որը արդէն ամենաբարձր ինստանցիան, հիմնարկութիւնն է, սա վերջին կէտն է: «Մայրու կօմիտէն» հսկում է և ղեկավարում է ճիշտ գործադրութեան վրայ: Հենց այստեղ չպետք է մտանալ, որ այս վարչութեան անդամները նոյնպէս նշանակւում են, առանց մի որ և է միջամտութիւնների, ուղղակի սուլթանի կողմից:

Երկրի կառավարիչները սուլթանի մարդիկն են, սրանց վրայ հսկողները և գործերը քննողները նոյնպէս. ինչ արդիւնք պիտի սպասել: Ըստ դրական, երկրի ամբողջ կառավարչական ոգին մարմնանալով սուլթանականութեան մէջ, նրա պաշտօնեաներն էլ պետք է լինին հաւատարիմ արձագանքը, նրա ճշմարիտ պատկերը, իր բէք չպետք է ցնորքների մէջ ընկնել և կարծել, որ «Մայրու կօմիտէն» կարող է զատ ոգի և տեսակետ ունենալ ժողովրդի շահերի ու պահանջների վերաբերմամբ, քան թէ ինքը սուլթանը: Դա կը լինի ամենակայիտ և տգետ սխալ. սուլթանին ենթարկուող և թէ

նրանից նշանակող մարմինների գործունեութիւնը լի-
նելու են շատ համերաշխ.—ըստ սուլթանի տւած Ծրա-
դրի և պատւէրներին: Եթէ տեղը ունենայ մի տարօրի-
նակ, չնաշխարհիկ երեւոյթ և «Մնայուն կօմիտէն» հա-
կառակ ոգի ունենայ, դարձեալ նա ոչինչ չէ կարող
անել, որովհետեւ, ինչպէս ասացինք, նա վճռող և գոր-
ծադրող մարմին չէ:

Միշտ և միշտ սուլթանը, երեք պետութիւնների նո-
րակազմ ըէֆօրմների գործադրողները, պահպանողները
ու վերահսկողները լինելու են սուլթանի գործակա-
տարները, որոնք երթարկուում են ամբողջովին սուլթա-
նին. վետօն սրանն է, ամեն ինչ սա է և առանց սրա
չիք ոչինչ: Եղբակացութիւնը աւելի քան պարզ է և
միշտ նոյնը—ներկայ իրերի գրութիւնը մ'նում
է անփոփոխ. այս է ճշմարտութիւնը. բողոքեցէ՛ք,
եթէ կայ տարբերութիւն...

Բայց որպէս զի բաց տեղ չմնայ, յիշատակենք և
«Բարձր կօմիտէնները», որը պիտի դարձեալ նշանակւի
սուլթանից և որի ընտրութեանը, այս անգամ ար-
դէն լըջօրէն, հաւանութիւն պիտի տան պետու-
թիւնները: Սա մի «Թուօցիկ իշխան» է, որ պիտի
անցնի երկրի մի ծայրից միւսը՝ ըէֆօրմները մտցնելու
և իւր «միստիան պիտի կնքի մի ընդհանուր քննութիւն
կատարելով»... իսկ յետոյ.—նա այլ ևս չկայ, համբառ-
նում է... և ամեն ինչ մնում է կատարելապէս սուլ-
թանին և իւր գեադաներին... սրանից յետոյ.—հեղեղ...
Ո՞ւմ հոգն է...

Հապա Ամիստիան, Էմիգրանտների վերադարձը, Կա-
նոնաւոր դատաւարութիւնը, Բանտերի վիճակը և այլն:
Սրանք ինքն ըստ ինքեան լինելու են հետևանք ներկայ
իրերի փոփոխութեան: Եւ մենք ոչինչ չենք ընդունում
սուլթանի կողմից իբրև շնորհ, որովհետև չենք ընդու-
նում և նրա իշխանութիւնը. նա, սուլթանի իշխանու-
թիւնը, կառավարութիւնը ապօրինի է, հիմնած է ա-
նառակութեան վրայ, մարդկային ամենատուրը ու անա-
րատ զգացմունքների կեղեքման վրայ. նա բռնակալու-
թիւն է:

Մենք կուում ենք բռնակալութեան դէմ, որովհե-
տև նա է թշնամին, որովհետև նա է պատճառը ներ-
կայ թշուառութեանց. քանի որ նա կայ և ապրում է,
կապրին գարշելի ներկայ պայմանները: Կուել մէկի
դէմ չի նշանակում ձանաչել նրա իրաւունքը, այլ
դոյութիւնը. և մենք կուում ենք նրա գոյութեան դէմ,
մենք նրա ոչնչանալն, նրա մահն ենք պահանջում. մեր
հարածները ուղղած են նրա, բռնակալութեան կեան-
քի դէմ... ընկաւ բռնակալութիւնը, սուլթանականու-
թիւնը և նրա դիակի վրայ կանգնեց ժողովուրդը, յաղ-

թութիւնը տարւած է...

Ինչպիսիքստիան արել է այն, ինչ որ ուզում էր.—
պահպանել Փոքր Ասիայում ներկայ քաղաքական դու-
թիւնը, սուլթանի միապետական պրէստիժը և հայ յե-
ղափոխական ժողովրդի աչքին թող փչել, որովհետև
ներկայումս այդ է պահանջում նրա պետական շա-
հերը:

Մենք էլ մերը կանենք: *Signe me*

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՒԱԳՐՈՒԹԻՒՆ *)

ՄԱՄԱՐԷ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԵՆԼԵՍՆԻ

Մամբրէ վարդապետ Պենլեան, զոր կը պատկանէր
Հնչակեան կուսակցութեան, իր անչափ փասակար և
ազգադաւ գործունէութեամբ որչափ աղէտաբեր եղաւ
Կ. Պոլսոյ մերայնոց իր հարցաքննութեան մէջ ըրած
խոստովանութիւններէն, արդէն յայտնի է. թողով իր
վարդապետական կարգը՝ նա առաջին օրէն դարձաւ օսմ.
կառավարութեան մի հայ առաջին լրտեսը և անխղճա-
բար շարունակեց իր աղէտալի շահատակութիւնները ի
փնաս իր ազգին, եկեղեցւոյն ու կրօնին: Մամբրէ վար-
դապետ կարգազուրկ լինելէ յետոյ Ալեքսան յորջորջ-
ւեցաւ: Աղէտաբէր Ալեքսանը հազարաւոր մայրեր լա-
ցուց, հազարաւոր կիներ այրի և հազարաւոր մանուկ-
ներ որս թողուց, իւր խիղճը երբէք չի տանջեց զինքը,
նա երբէք օր մը չի զղջաց, նա միշտ հալածեց հայը,
նա հազարաւոր անմեղներու քրտորանաց և բանտարկու-
թեան պատճառ եղաւ իր բացարձակ զրպարտութիւն-
ներովը:

Ինչպէս որ քիչ մը վերը յիշեցինք Մամբրէի Հնչակ-
եան Կ. Պոլսոյ մասնաճիւղի անգամ ըլլալը, երբ Գում-
Գաբուի դէպքէն քանի մը օր վերջը տեսնելով, թէ
ինքն ալ վտանգի և ձերբակալութեան պիտի ենթար-
կւի, խոյս կուտայ Պոլսէն դէպի Պէյազիտ, այնտեղ
ոստիկանութիւնը կը հալածէ, շուտով կը վերադառնայ
Պոլիս. տեսնելով իր ընկերներուն ձերբակալութիւնը
երկիւղէն ազատելու միջոց կորոնէ և վերջապէս կորոյէ
ինքն անձամբ երթալ ոստիկանութեան նախարար Նա-

*) 1890 թւականին, Յուլիս ամսոյ 15-րդ օրը Կ. Պոլսոյ
Գում-Գաբուի նշանաւոր ցոյցին մասնակցող ծանօթ դէմ-
քեր ի վերջոյ ուղղակի կամ անուղղակի կերպիւ դարձան մէկ
մէկ փասակար մատնիչներ. մենք պարզայնիս այդ անձնաւո-
րութեանց գործերը ճշմարտապէս երեւան հանելու նպա-
տակաւ ամենամեծ զոհողութիւններով յաջողած եմք ձեռք
բերել իւրաքանչիւր խոստովանութեան պայտօնակաւն թրղ-
թերը եւ կարգաւ թարգմանելով պահած եմք ապօրինի.
մենք նաւաթմ հրատարակութեան կը տանք այս տեղեկա-
գիրը:

Ման. Կ. Պոլ. Կեդ. Կովտէ:

զըմ պէյին անձնատուր ըլլալ և խոստովանել ճշմարտութիւնը, ուղղակի երթալ յանձնելի. «ես ալ հընչակեան եմ» ըսելը իրեն համար վտանգաւոր կրնար ըլլալ: ուստի նա կը դիմէ ուրիշ միջոցի մը, այսինքն ինքը կը խմբագրէ «Հնչակ»-եան կուսակցութեան կողմէ սպառնական նամակ մը իւր անւան ուղղած և այդ նամակը կը տանի ոստիկանութեան նախարարին և անոր պաշտպանութիւնը կը խնդրէ:

Ահաւասիկ այդ նամակի պատճէնը, զոր գտած եմք իր հարցաքննութեան պաշտօնական թղթերու մէջ և կէտ առ կէտ օրինակելով դրած եմք հոս:

Ահաւասիկ պատճէնը կեղծ զեկուցագրին.

Հնչակական կուսակցութիւն.

(Կ, Պօլիս մասնաճիւղ)

Գեր. Մամբրէ վարդապետ Պէնլեան

Իւսկիւտար Սէլամիէ

Կուսակցութեանս գործադիր ժողովը, տեղեկացած լինելով, որ դուք մեզի դէմ դաւադրութիւններ ընելու մտադիր էք, ժողովոյս ներկայ որոշումով մահուան կը դատապարտենք Ձեզ, եթէ ի գործ դնէք այդ վնասակար և ազգասպան դիտաւորութիւնը: Զգուշացէք:

Հնչակեան կուսակցութեան մասնաճիւղ

Կ. Պօլսոյ:

Կ. Պօլիս, 9 սեպտեմբերի 1890

Կիւրակի:

Մամբրէ վարդապետ նոյն օրը իրեկոյին վերոյդրեալ շինծու սպառնական նամակը դողդոջալով և արտասուելով կը տանի ոստիկանութեան նախարար Նազըմ պէյի ապարանքը. երեկոյին կը հիւրընկալի և հետեւեալ օրը ոստիկանութեան դուռը տանւելով կը հարցաքննուի պաշտօնապէս:

Ահաւասիկ իր հարցաքննութեան մէջ ըրած սարսափելի խոստովանութեանց թուրքերէնի հայ թարգմանութիւնը.

- Հարցաքննութիւն Մամբրէ էֆէնդիի.—
- Հարցաքննիչը.— Ի՞նչ է անունդ և մականունդ:
- Մամբրէ.— Անունս Մամբրէ վարդապետ (րահիպ) է, մականունս Պէնլեան:
- Հարց.— Քանի՞ տարեկան ես:
- Մամբ.— Քսան և ութը տարեկան եմ:
- Հարց.— Ո՞րտեղացի ես:
- Մամբ.— Կ. պոլսեցի եմ, Իւսկիւտար Սէլամնըզ թաղէն:
- Հարց.— Ո՞ր տէրութեան հպատակ էք:
- Մամբ.— Օսմանեան հպատակ եմ:
- Հարց.— Արհեստդ ի՞նչ է:
- Մամբ.— Արհեստով եկեղեցւոյ պաշտօնեայ եմ, վարդապետ (րահիպ):
- Հարց.— Ո՞ր կրօնի և ազգութեան կը պատկանիք:
- Մամբ.— Լուսաւորչական հայ եմ.՝ Գուժմ-Գաբուժի պատրիարքարանին կը պատկանիմ:
- Հարց.— Ո՞ւր տեղի եկեղեցւոյ պաշտօն կը վարէք:

Մամբ.— Իւսկիւտարի Սէլամնըզ ս. Խաչ եկեղեցւոյ մէջ է պաշտօնս:

Հարց.— Ամսականնիդ որչա՞փ է:

Մամբ.— Ամսական չունիմ, արտաքոյ կարգի հասցիքներով կապրիմ: Յուշարկաւորութեան կերթամ, ուրիշ եկեղեցիներ կը հիւրասիրեմ, պաշտօն կը վարեմ, բոլոր շահու աղբիւրները ասոնք են:

Հարց.— Ուրախ ե՞նք, որ դուք այսօր եկած էք հայոց գաղտնի ընկերութեանց մասին մեզի տեղեկութիւններ տալու յեղափոխական խումբի կողմէ. ձեր հասցէին ուղղած նամակէն յայտնի կերեի, թէ դուք ևս այդ ընկերութեան մէջ կը գտնուիք և անդամակցութիւն ունիք, և դուք այսօր կրնաք այդ անհաւատարիմ և վրնասակար անձինքները ցոյց տալ մեզ, հոգ չէ, որ անոնք սպառնական գիր փրկած են ձեզ, դուք ինքզինքնիդ ամեն վտանգէ զերծ համարելով՝ ցոյց պիտի տաք կառավարութեան զանոնք, որպէս զի իրենց արդար պատիժը կրնն: Ե՞րբ ստացաք այս նամակը:

Մամբ.— Երեկ առաւօտ, որ կիւրակի էր, կանուխ ևւայ եկեղեցի երթալու համար, հագնւեցայ, երբ փողոցին դուռը բացի դուրս ելլելու համար, դոց պահարանի մէջ այս սպառնական նամակը առջևս ինկաւ, նամակը դրպանս գրի և եկեղեցի երթալով խուցս մտայ. այնտեղ բացի նամակը, կարդացի և տեղեկացայ պարունակութիւնը. եկեղեցւոյ արարողութիւնը վերջանալէ յետոյ բնակարանս եկայ և մտածեցի թէ ի՞նչ ընել պէտք է. վերջապէս որոշեցի կառավարութեան իմաց տալ իրականութիւն և անով հաստատել իմ հաւատարմութիւնս առ օսմ. պետութիւն, որոյ ուխտեալ եմ եկեղեցականութեան կարգս առած ժամանակ:

Հարց.— Դուք որչա՞փ ժամանակ այս խոռվարար ընկերութեան մէջ մտած էք:

Մամբ.— Հինգ-վեց ամսոյ չափ լինելու է:

Հարց.— Անշուշտ Գուրպան պայրամի օրը Գուժմ-Գաբուժի պատրիարքարանը եղած դէպքի առթիւ կանխաւ տեղեկութիւն ունէի՞ք դուք:

Մամբ.— Այդ առթիւ շատ քիչ տեղեկութիւն ունէի, որովհետև կօմիտէի անդամները գաղտնի կը պահէին ոչ միայն ինձմէ, այլ ուրիշ շատ անդամներէ:

Հարց.— Ի՞նչ պատճառաւ գաղտնի կը պահէին, մի՞թէ ձեր հաւատարմութեան վրայ կասկած ունէին:

Մամբ.— Որչափ որ յայտնի է ինձ «Հնչակեան» կօմիտէի մի քանի անդամոց միայն գիտակցութեամբը: պատրաստած էր այդ ցոյցը, և այդ ցոյցը ընողները աւելի Փորթուգալեանի խումբին կը պատկանէին, որչափ որ հնչափեաններուն: Օրինակի համար, Յարութիւն Ճիհան-կիւլեան և Կէմալմազ Մանուկ *) Փորթուգալ

*) Կէմալմազ Մանուկ անուն հայրենասէրը նախատակեցաւ Գուժմ-Գաբուժի նշանաւոր ցոյցի օրը:

եանի կուսակցութենէն էին, հնչակեաններ ալ կը գտնուէին, բայց նոքա շատ քիչուր էին:

Հարց. — Դուք Փորթուգալեանի ընկերութեան մէջ մտած եւ անդամակցութիւն ըրած էք:

Մամբ. — Երբէք, ես այդ ընկերութեան պատկանողները Գուլ-Գաբուի ցոյցէն վերջը ճանչցայ, երբ նոքա ձերբակալեցան, իսկ անկից առաջ անոնցմէ եւ ոչ մէկը կը ճանչնայի:

Հարց. — Հնչակեանները շատ են թէ Փորթուգալեանները:

Մամբ. — Պոլսոյ մէջ նախ եւ առաջ Փորթուգալեան կուսակցութիւնը երևան ելած է. հնչակեանները երկու տարի վերջը գործունէութիւն ըսկսած են:

Հարց. — Այդ երկու փնասակար ընկերութեանց բուն նպատակները կրնա՞ք բացատրել մեզ:

Մամբ. — Ասոնց նպատակները բացարձակապէս օսմանեան երկրի մէջ յեղափոխութիւն հանել եւ այսպիսով Հայկական իշխանութիւն մը ձեռք բերել. ահա այս է անոնց բուն նպատակը:

Հարց. — Հնչակեան եւ Փորթուգալեան կուսակցութեանց տարբերութիւնը ի՞նչ է:

Մամբ. — Ասոնց երկուսին ալ նպատակը միևնոյնն է, այսինքն զինու զօրութեամբ ազատ ըլլալ: Հնչակեան կոմիտէն իր հրատարակութիւններով ժողովուրդը ուղղակի դէպի յեղափոխութեան կառաջնորդէ. ապստամբութիւնը աւելի դրական միջոց մը է, կսէ, թրքական լուծը թօթափելու եւ ազատ ըլլալու համար. իսկ Փորթուգալեան հայ ժողովուրդին կը քարոզէ միշտ իրեն հպատակել եւ համերաշխութեամբ գործել ժամանակին պահանջմանց համեմատ. Փորթուգալեան անընդհատ եւ շարունակաբար իր «Արմենիա» թերթի միջոցաւ դրամ կը պահանջէ ժողովուրդէն: Այս վերջինի մասին իմ կարծիքս այն է՝ թէ Փորթուգալեան կուզէ մեծաքանակ գումար մը ձեռք բերելով, Ռուսաստանէն զէնք պիտի գնէ եւ այդ զէնքերը սահմանէն անցնելով ձան պիտի խրկէ հայոց բաշխելու եւ յեղափոխութիւն յարուցանելու համար:

(Կը շարունակուի)

Խ Ա Ր Ա Խ Ա Ն Ե Ա Ն

Ն Ե Ր Ս Է Ս Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ

II

1892 թ. սեպտեմբերին պատրիարքարանի հրամանով Խարախանեանը Բաղէշ եկաւ առաջնորդական ընտրութիւն կատարել տալու: Թահսի փաշան սկսել էր հայերը մէկ մէկ բանտարկել եւ կողոպտել:

Բաղէշից Խարախանեանը անցաւ Բուլանլիս եւ Մանգկերտ, եւ այդ երկու գաւառակի հայերի վիճակը գիւղ գիւղ շօջելով՝ ուսումնասիրեց ու հարստահարութիւնները գրեց, որպէս զի Մուշ վերագառնալուն մի օրինակ կառավարութեանը տայ, մի օրինակ էլ ուղարկի պատրիարքարան: Այս միջոցին պատահում է մի դէպք: Ավզուտի տիլի մուշաղշէնցի Աստուածատուրը իւր վրայ եկող ոստիկաններից Խախ չափուշին սպանում է, ինքն էլ սպանում: Այս դէպքը Թահսի փաշայի ձեռքում մեծ զէնք է լինում. անհատական դէպքին նա տալիս է քաղաքական գոյն. սոսկալի եւ անկարագրելի տանջանքներով ստիպում է տալ վարդենեացի Մարգար վարժապետի եւ ուրիշների անունները, վերջապէս այդ ամբողջ դէպքը տեղեկագրում է իբրև Խարախանեանի թելադրութեամբ կատարած. այսպիսով սուլթանից ստանում է հրաման Խարախանեանին ձերբակալելու: 1893-ի Յունւարի 17-ին վերջինս վերագառնում է Մուշ եւ ուղարկում է պատրիարքարան Ավզուտի դէպքի ճիշտ նկարագիրն, յայտնելով որ ավզուտցիներից ոմանց ծեծելով եւ երկաթով դաղելով ըստիպել են իրեն իբրև թելադրող ցոյց տալ: Նոյն տարւայ Փետրուարի 3-ին Մշոյ ընդհանուր դատախազի օգնականը եւ ոստիկանութեան տեսուչը մի խումբ ոստիկաններով առաջնորդարանը խուզարկեցին, բոլոր արձանագրութիւնները, թղթերը, գրքերը տուրակների մէջ լցրած կնքեցին եւ իրեն առաջնորդին էլ հրաւիրեցին կառավարութեան ապարանքը: Խարախանեանը մէկէն մէկ չուզեց գնալ՝ առարկելով թէ մինչև պատրիարքարանից հրաման չլինի, չի կարող գալ կառավարութիւնը մի քանի երեւելի հայեր ուղարկեց նրան համոզելու, որ ընդդիմութիւն չանէ, որից կարող են վատ հետևանքներ յառաջ գալ: Արջապէս նրան բռնի կերպով Մուշից Բաղէշ բերին, ձանապարհին հայոց գիւղերը հանդիպելուց զգուշանալով: Բաղէշի մէջ նրան մի ամենավատ սենեակի մէջ փակեցին եւ յարաբերութիւններից բոլորովին կտրեցին: Սպասուոր անգամ չէր կարող մտնել մօտը եւ եթէ ինչ ինչ հարկաւոր պատուերներ ունենար, տաճկերէն պիտի յայտներ, այն էլ մի ոստիկանի ներկայութեամբ: Բանտարկութեան երկրորդ ամսում Խարախանեան մի հեռագրով բողոքելով իւր դէմ եղած բռնութեանց մասին՝ խնդրել էր դատի տեղափոխութիւնը. այս հեռագրի օրինակը պատրիարքարանին էլ հաղորդւեցաւ: Յակայն Թահսի փաշային յաջողեց այս հեռագիրը անհետանալ թողնել: Բանտարկութեան մէջ նրա դէմ այնպիսի բերտ վարմունքներ էին թոյլ տալիս ոստիկանները, ինչ որ քիչուր բանտարկեալին կը խնայէին, արհամարհանք, ծաղր, նախատինք, հայհոյութիւն: Դուրս գալ եւ մտնել կարող էր միայն հինգ-վեց սեփաւոր ոստիկաններով. այսպէս նա ապրեց մի խոնաւ, աղտոտ, ներքնայարկ եւ մերկ սենեակի մէջ մինչև տարուոյս ապրիլի սկզբները: Կառավարութիւնը չկարողանալով նորա դէմ ապացոյցներ գտնել ժամանակին, մի քանի բանտարկեալների տանջանքներով եւ խաբէութեամբ իւր ուղղածները գրել եւ ստորագրել աւեց. յետոյ նրա թղթերի միջից մի քանի պաշտօնա-

կան նամակները ուրիշ ընդարձակ մեկնութիւն տալով, նրա դէմ իբրև ապացոյց գործածեց: Դատարանում անդամակցող երկու Հայերից մէկին առնելով միւսին միայն թողեց, որ մի գուցէ երկու Հայերը միացած Խարախանեանի դատապարտութեան վճիռ տան. դատարանը նրան փաստաբան տւեց մի թուրք. Հայի արգելած էր նրան փաստաբան լինել: Ուստի փաստաբանը կառավարութիւնից թելադրած՝ աշխատեց նրան մոլորեցնել և օգնելու փոխարէն մնաս տւեց: Դատարանը զրացաւ տալ նրան մի օրինակ այն ամբաստանութեանց, որոնք նրա դէմ էին: Դատապարտութեան արձանագրութիւնը անգամ խարդախ կազմած է. ինչ որ նպաստաւոր է նրան, չէ արձանագրւած, իսկ աննպաստ և նրա դէմ իօսածներն շատ յաւելւածներով արձանագրւած են. և այս մասին մեղադրեալի դիտողութիւններն էլ անխելի են մնացել և առանց արձանագրելու: Դատարանը հակառակ օրինաց և Խարախանեանի պահանջման մերժեց ատենը կանչել և հրապարակաւ մեղադրեալի ներկայութեամբ խօսք տալ նրա դէմ, իբր վկայ նշանակւած ավերոտի Յակոբին և Մախասին, գիտնալով որ նոքա եթէ ատենը գային, պիտի խօսեին, ինչ որ ճշմարիտ է, պիտի յայանէին իրենց կրած սոսկալի չարչարանքները: Առավարութիւնը յայտնի չէ, թէ որտեղից գտել էր նրա դէմ մի սքանչելի վկայ, Վանայ վիճակի գիւղերից Էժ շիտ Շավել անունով մէկը, որին թելադրել էր՝ ասել ծայրայեղ ստեր: Այս վկան միայն բերեցաւ ատենն. նա ևս խոստովանեցաւ, թէ իրեն չափազանց ծեծելով, թելադրած էին ասել իր չը գիտցած բաները, թէ ինք երբէք Մուշ գնացել չէ և Մշջ առաջնորդին չի ձանաչում... շատ ամօթ, բայց ով կամաչի: Դատարանը Խարախանեանին հինգ տարւայ բանտարկութեան դատապարտեց. սակայն այդ վճիռը ջրնջւած է և ևս եկած ութ ամիս առաջ: Աճուաբեկ ատենը երկու պատճառով վճիռը ջնջել է. Ա. նրա համար, որ յանցանքը և որոշւած պատիժը համեմատական չէ գտել. պատիժը թեթեւ է եղել: Բ. նրա համար, որ Խարախանեանի ցոյց տւած վկաները մերժած են:

Խարախանեանի երկրորդ դատաւարութիւնը սկսեց փետրուարի 6-ին այս տարի և որոշեց նրա ցոյց տւած վկաները բերել սաբ Բայց սորանից յետոյ հրաման եկաւ Խարախանեանին Պոլիս փոխադրել: Պատրիարքարանի վերաբերմունքը այս խնդրում շատ թոյլ է եղած: Օսմանեան սուլթանների Փիրմանների տրամադրութեամբ Տաճկաստանի հայ եկեղացականները իրաւունք պիտի ունենան վայելել ինչ ինչ առանձնաշնորհումներ և մասնաւորապէս ազատ էին ձերբակալութիւններից և կառավարութեան ձեռարձակութիւններից. հասարակ քահանային անգամ անմատչելի էին, բայց պատրիարքարանը Աշդեանի օրով չկարողացաւ այդ հին իրաւունքն անգամ պահել պաշտպանել: Միայն նոր պատրիարք Իզմիրլեանի զօրեղ կամքի շնորհիւ էր, որ քաղմաթիւ յեղափոխականներ, նորա թուում և ներսէս, Խարախանեանը, խոնաւ և խուշ բանտերից ազատեցան և տեղափոխեցան Կ. Պոլիս:

ՆԻՆՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅՈՒՑԱԿԸ

Վ. Պոլսի Կեդրոնական սնդուկի մէջ Բլուր քաղաքէն ստացեցան.

Հրաբուղի 10 դահեկան., Սմբատ 20 դհ., Ածելի 10 դհ., Մախաթ 10 դհ., Մեղու 40 դհ., Ավառ 10 դհ., Արշակ 20 դհ., Խոփ 6 դհ., Դանակ 20 դհ., Գրիչ 20 դհ., Երևանդ և Հրանտ 40 դհ., Պիղ 5 դհ., Մլաք 20 դհ., Պասման 20 դհ., Գամիկ 10 դհ., Արկղ 20 դհ., Խփէք 20 դհ., Մուայլ 10 դհ., Համրիչ 20 դհ., Չապանակ 10 դհ., Ազղարշակ 20 դհ., Մեքենայ 10 դհ., Պղինձ 20 դհ., Խարտոց 5 դհ., Կոճղ 5 դհ., Նագրավ 20 դհ., Մետաքս 56 դհ., Արդյր 10 դհ., Կշու 10 դհ., Կարկուտ 20 դհ., Ճարպիկ 20 դհ., Արամ 10 դհ., Պողպատ 10 դհ., Մոստիչ 10 դհ., Կարդինալ 10 դհ., Միհրան 8 դհ., Ասող 20 դհ., Պիծակ 10 դհ.:

Վշապ քաղաքի Կեդրոն. սնդուկի մէջ ստացեցան.

Մեղրիկ 55 դահեկան, Արամ 20 դահ., Մաթիկոնեան 100 դհ., Կոյճեր 70 դհ., Ոմ 80 դհ., Ա. Կոյճակ 110 դհ.:

Շամ-ից 27 բուբլի, Եկտ-ից 20 բ., Օդ-ից 95բ., Հ. Ա-ից 10 բ., Դշ-ից 17 բ., Օդ-ից 149բ., Օդ-ից 400 բ., Ախց-ի խմբերից՝ Գահից, Արծաթից, Փայլակից, Անիւից և ... 140 բ., Գ. քաղաքի «Գարունից» 40 բ., Ապառաժ ք-ից 500 բուբլի:

Սլաից Ս. Յ. 10 ղուան
 «Գարունից» 500 փամիուշտ, ԹՓ. քաղաքի «Փարոս» խմբից 41 ղոնդաղ:

Անկարող լինելով մեզ բոլոր դիմողներին պատասխանել առանձին-առանձին, կրկին անգամ յայտարարում ենք, որ թէ «Դրօշակը» և թէ մեր միւս հրատարակութիւնները ուղարկւում են ձրի:

Ուղղակի «Դրօշակ»-ի հասցէով ուղարկած նւիրատուութիւնները, եթէ լոյս չեն տեսնում մի-երկու համարից յետոյ, խնդրում ենք յայտնել այդ մասին անմիջապէս:

Խնդրում ենք հասցէները գրել խիստ ուրոշ և պարզ:

Դրանակցութեան անձամբներց ինքուում է թղթակցութեան և նւիրատուութեան համար դիմել:
 L. Boole, 45, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիլհելմ Բուլ, Գոթթեմարի քաղաքում, Կոնստանդնուպոլիսում